№ 190 ՇԱԲԱԹ ՕԳՈՍՏՈՍԻ 30

1908
ԵՐԵՍՈՒՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ ՕԳՈՍՏՈՍԻ 30 № 190

ՄՇԱԿ

ԽՄԲԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ“ Базарная ул. д. Тамамшева № 16.
կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տելեֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզւով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ
Տելեֆօն № 253.

Հաշւապահական եւ Գրասենեակային
ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐ
ԹԻՖԼԻՍԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻՆ ԿԻՑ
(ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

Կուրսերում աւանդվում են. հաշւապահութիւն, առևտրական թղթակցութիւն, առևտրական օրէնսգիտութիւն և գեղագրութիւն: Ցանկացողներին սովորեցվում է գրող մեքենայի վրա աշխատել:

Պարապմունքների սկիզբը սեպտեմբերի 15-ից 1908 թ.

Կուրսերը շարունակվում են ոչ պակաս 6 ամսից: Պարապմունքները տեղի են ունենում երեկոները, շաբաթական երեք անգամ:

ՈՒՆԿՆԴԻՐ ԿԱՐՈՂ ԵՆ ԼԻՆԵԼ ԳՐԱԳԷՏ ԱՆՁԵՐ՝ ԵՐԿՈՒ ՍԵՌԻՑ

Ամբողջ կուրսի վճարն է 40 րուբլի

Խնդիրները—Թիֆլիսի առևտրական դպրոցի դիրեկտորի անունով—ընդունվում են դպրոցի գրասենեակում՝ առաւօտեան ժամը 10-ից մինչև 12-ը:

Դպրոցի դիրեկտոր՝ Գ. Գեխտման

առ. (ապ.) (Հ. Հ.) 12—11

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ
(Тифлисъ. Сололаки, Лермонтовская улица № 15)

Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից: Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից: Ամեն օր, առաւօտեան ժամը 10-ից մինչև 12 ը, և երեկոյեան 4-ից մինչև 6 ժամը: Ծրագիրը և կանոնները տրվում և ուղարկվում են ցանկացողներին ձրիապէս:

(Ե. Հ.) առ. 10—4

Էմմ. Բաղ. ՆԱԶԱՐԵԱՆՑ
Լոյս տեսան
1) «Ընտիր Հատուածներ» Ա. մաս—արձակ, հինգերորդ տիպ, 370 երես.
2) «Ընտ. Հատ.» Բ. մաս—բանաստեղծութիւն, երկրորդ տիպ, 416 երես.
Երկուսն էլ բարեփոխված և մեր նորագոյն գրողների երկերով հարստացրած:
Իւրաքանչիւր մասի գինն է 80 կոպ.: Գումարով գնողներին՝ 65 կոպ.: Երկու մասերը միասին՝ 1 ր. 50 կոպ.: Գումարով գնողին՝ 1 ր. 20 կ.: Յօրինողին դիմողը ճանապարհածախս չէ տալիս:
Դիմել՝ 1) МОСКВА, Свящ. Э. Назарянцъ.
2) ТИФЛИСЪ, Центральная Книжная Торговля.
3) БАКУ, Книжный магазинъ «Сотрудникъ»
(ա.) 10—10

ՄԱՆԹԱՇԵԱՆ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԴՊՐՈՑ,
հաստատված Թիֆլիսի վաճառականական ընկերութիւնից: Նախապատրաստական (հանրակրթական) դասարանը ընդունվում են առանց քննութեան այն երեխաները, որոնք կը ներկայացնեն միջնակարգ ուսումնարանից ոչ պակաս դասընթացքի աւարտման վկայական, իսկ առաջինում՝ քաղաքային կամ շինական դպրոցների երկդասեանից ոչ պակաս, կամ թէ որոնք համապատասխան քննութիւն կը բռնեն:
Ընդունելութեան քննութիւնները սեպտ. 1, 2 և 3 ին, առ. ժամը $8^1/_2$ ից:
Խնդրագրերի ընդունելութիւնը և տեղեկութիւններ տալը ամեն օր դպրոցի դիւանատանը, ժամը 9—1-ը: Ուսման վճարն է 15 րուբլի կիսամեակի համար:
Դպրոցը գտնվում է Թիֆլիսի առևտրական ուսումնարանի շինութեան մէջ, Պեսկովսկայա փողոցում:
Տեսուչ՝ Վ. Ա. Բարսեղեան
(15,17,19,21,24,26,30,2) ա. 8—7

ԲԺՇԿԱՊԵՏ
Բ. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆԻ
ՍՈՒԱՋԻՆ
Մ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑՈՒՄ
(Վօրօնցովի արձանի հանդէպ)
Կատարվում է ՀԱԿԱԽՕԼԵՐԱՅԻՆ ՊԱՏՈՒԱՍՏՈՒՄՆ 9—2 ժ. առ. և $5^1/_2$—7 ժ. եր.
Վճար իւրաքանչիւր պատուաստման համար 1 ր. 50 կ.:
(առ.) (օ. մ.) 15—7

ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ԴԱՍԱՏՈՒ
ԴԱՇՆԱՄՈՒՐԻ
ազատ գեղարուեստագէտ
ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆԻ
Елизаветинская, № 40.
Ուսման վճարը՝ տարեկան 60 ր., ստացվում է կիսամեակներով—սեպտեմբերին և յունվարին:
(առ.) ա. օ. 10—2

ԳՈՐԾ, ԳՈՐԾ ԿԱՏԱՐԵՑԷՔ

Մի ամիս և կէս է, որ հրատարակվել է թիւրքական սահմանադրութիւնը: Եթէ թերթենք Կ. Պոլսի հայ լրագիրները, մենք կը տեսնենք, որ Կ. Պոլսի ամբողջ հայութիւնը, ինտելիգենցիայից սկսած մինչև հասարակ ժողովուրդը, զբաղված է տօնախմբութիւններով, խրախճաններով և մանաւանդ միտինգներով, ճառախօսութիւններով: Միտինգներ և միտինգներ, ճառախօսութիւններ և ճառախօսութիւններ, իսկ դեռ դրական, ստեղծագործական ոչ մի գործունէութիւն:

Եւ մինչ Կ. Պոլիսը ցնծում է, գաւառները, բուն երկիրը՝ Հայաստանը՝ մնում են նոյն դրութեան մէջ: Ազատութիւնը այդտեղ ևս հրատարակվեց, բայց այդ ազատութեամբ հայ ժողովուրդն օգտվեց նրանով, որ նոր պանդխտութեան և գաղթականութեան դուռն բանայ:

Եւ դա շատ հասկանալի է: Դարերով ճնշված, հարստահարված, սարկացած ժողովուրդը, ի հարկէ, առաջին գործադրութիւնը, որ կանէր ստացած ազատութիւնից, կը լինէր օգուտ քաղել նրանից ամենից առաջ իր նիւթական-տնտեսական վիճակը բարւոքելու: Իր երկրում չը գտնելով միջոցներ՝ նիւթական բարեկեցութիւն ձեռք բերելու, որովհետև երկիրը բոլորովին քայքայված, աւերված է տնտեսապէս, երկրում չը կայ ոչ մի արդիւնաբերութիւն, նա, բնականաբար, պէտք է դիմէ այնտեղ, ուր կեանքը տնտեսապէս և արդիւնաբերապէս աւելի զարգացած է:

Ուրեմն, սահմանադրութեան և ազատութեան հրատարակութիւնից յետոյ պէտք էր անմիջապէս մտածել, հոգ տանել, որ գաւառներում, բուն երկրում ստեղծվեն տնտեսական, արդիւնաբերական ձեռնարկութիւններ, բացվեն կրթական հաստատութիւններ, կամ աւելի ընդհանրապէս խօսելով, պէտք էր հիմն դնել մի շարք կուլտուրական ձեռնարկութիւնների, որոնք կարողանային ապագայում հետզհետէ դառնալ ժողովրդի նիւթական, տնտեսական բարգաւաճման անսպառ աղբիւրներ:

Այդպիսի ձեռնարկութիւններ մենք դեռ չենք տեսնում Կ. Պոլսի հայութեան ղեկավարներից, այլ ամեն օր կարդում ենք ատենախօսութիւնների, միտինգների և խնջոյքների մասին:

Հասկանալի է, ի հարկէ, որ առանց միտինգների, ատենախօսութիւնների, խրախճանների չէր կարող անցնել, երբ տեղի ունեցաւ այնպիսի մի անակնկալ յեղաշրջումն, որպիսին է թիւրքական սահմանադրութիւնը, բայց ամեն բան չափ և սահման ունի, ամեն մի կորցրած բոպէն կարող է շատ թանգ նստել ժողովրդի համար: Ժամանակ է սկսել ստեղծագործական, արդիւնաբերական գործ, ժամանակ է ստեղծել գաւառներում մի շարք կուլտուրական-տնտեսական ձեռնարկութիւններ, որոնք հիմն դնէին հայ ժողովրդի տնտեսական կեանքի բարւոքման և չը ստիպէին նրան օգտվել ազատութիւնից՝ օտար երկիրներում որոնել բարեկեցութեան աղբիւրը:

Ճառերից, միտինգներից յետոյ այժմ գործ, գործ կատարեցէք:

Հ. Առաքելեան

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Պետերբուրգից հեռագրում են „Баку“ լրագրին.

Օգոստոսի 28-ին Փոխարքայ կոմս Վօրօնցօվ-Դաշկօվը ուղևորվում է իր կալուածքը:

Նրա վերադարձը իր պաշտօնին կամ հրաժարականը՝ լիովին կախված կը լինի կոմսի իրա ցանկութիւնից:

Ամենայն հայոց կաթողիկոսական պաշտօնի թեկնածուից ներքին գործերի մինիստրութիւնը մտադիր է պահանջել, որպէսզի նա անպատճառ իմանայ ռուսերէն լեզուն, նկատի առնելով կառավարութեան հետ կօնֆիդենցիալ յարաբերութիւնների ժամանակ նրա անհրաժեշտութիւնը:

—

Օգոստոսի 23-ին «Р. Сл.» լրագիրը Լօնդօնից ստացել է հետևեալ հեռագիրը.

Գերմանիայի բռնած դիրքը Մուլէյ-Հաֆիդին Մարօկկօյի սուլթան ճանաչելու գործում՝ Լօնդօնում չափազանց անախորժ տպաւորութիւն է թողել:

Ներկայ դէպքում Գերմանիայի շտապելու նախաձեռնութիւնը վերագրում են Վիլհէլմ կայսրին:

Լօնդօնի շրջաններում Գերմանիայի այդ վարմունքով Անգլիայի և Ֆրանսիայի իրաւունքները խախտված են համարում:

Եթէ Գերմանիան շարունակելու լինի պնդել իր ասածի վրա, Անգլիան Ֆրանսիային ամենաեռանդուն աջակցութիւն ցոյց կը տայ:

Պէտք է յուսալ սակայն, որ Գերմանիան խոհեմութեամբ կը վարվի, որովհետև հակառակ դէպքում անգլօ-գերմանական մերձեցումը, որի մասին այժմ այնքան աշխատում են, կը տապալվի երկար ժամանակով:

—

Բուդապեշտ, 28 օգոստոսի

Համապետական ֆինանսների մինիստր Բուրիանը, գալով Բօսնիայից և Հերցեգօվինայից, յայտնեց մամուլի մի ներկայացուցչի, որ Բօսնիայում ծագած յուզմունքների լուրերը անհիմն են, սխալ են պատերազմական պատրաստութիւնների և Կատտարօ նաւախումբ ուղարկելու մասին տարածվող տեղեկութիւնները, նոյնպէս և սահմանադրութիւն պարգևելու լուրը. մօտիկ ապագայում մտադրութիւն կայ ներկայացուցչութիւն մտցնել: Մինիստրը այդ հարցերի վերաբերութեամբ մանրամասն կը խօսէ պատգամաւորութեան հետ:

(«Հ. Գ.»)

—

Պետերբուրգ, 28 օգոստոսի

Պետերբուրգի Հեռագրական Գործակալութիւնը կայսրութեան բաղմաթիւ քաղաքներից հեռագիրներ ստացաւ այն մասին, որ գրական երեկոներ և ժողովներ են կազմակերպվել կոմս Լ. Ն. Տօլստօյի ծննդեան 80-ամեայ տօնի առիթով: («Հ. Գ.»)

—

Բաղդադ, 28 օգոստոսի

Հրդեհ ծագեց քաղաքի առևտրական մասում. այրվեց համարեա ամբողջ թաղը: («Հ. Գ.»)

—

Կ. Պոլիս, 28 օգոստոսի

Հռոմի թիւրքական դեսպան Րաշիդ-փաշան նշանակված է Վիեննայի դեսպան: («Հ. Գ.»)

—

Տօկիօ, 28 օգոստոսի

Մօջիում գրաւվեցին կեղծ տասրուբլիանոցներ: Պարզվեց, որ կեղծողները կապեր ունեն Շանխայի, Նագասակի, Տօկիօյի և Օսակօյի հետ: Փաբրիկան գտնվում է Հարաւային Մանջուրիայում: («Հ. Գ.»)

—

Էջմիածնից ստացանք հետևեալ հեռագիրը օգոստոսի 28-ից.

Երեւանի մօտերը կողոպտել են վանքի գանձապահին, որից տարել են մի քանի հազար րուբլի:

Մ. Բերբերեան

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԵՐԸ

Օրվայ խօսակցութեան առարկան Թէհրանում այն բռունցքամարտն է, որ մօտ օրերս տեղի է ունեցել իր ազդեցութեամբ ամենազօր, բայց վատասիրտ ու թոյլ Էմիր-Ջենգ-Բօհադուրի և պարսկական պրեմիէր-սադրազամ Մուշիր-Սալթանէի միջև:

Ընդհարումը տեղի է ունեցել Էմիր-Ջենգի փրանում այն վիճաբանութեան ժամանակ՝ թէ ո՛ր զօրքերը ուղարկել Քիրմանի ապստամբ ազգաբնակութիւնը ճնշելու համար և ո՛ւմ յանձնարարել նրանց հրամանատարութիւնը:

Տաք վիճաբանութիւնը փոխվում է շուտով հայհոյանքի, որը վերջացել է տուր ու դմբոցով, և, եթէ պօլկօվնիկ Լեախովի պատահաբար ներս մտնելը չը լինէր, որից երկու պաշտօնեաներն էլ վախենում են սաստիկ, կարող էր պատահել, որ Պարսկաստանը զրկվէր իր անձնազոհ պաշտպաններից, որոնք ժողովուրդը հեռու են պահում վնասակար ազատամտական հովերից:

(«Р. Ут.»)

—

Թէհրանի լրագիրները նկարագրում են այն ընդհարումների մանրամասնութիւնները, որ տեղի են ունեցել շահի Բաղէ-շահ ամարանոցում՝ Իրանի պետի անձը պաշտպանելու կոչված վայրենի հօրդաների ձիաւորների միջև:

Այդ ձիաւորների մէջ անկարգութիւններն ու սանձարձակութիւնները այնպիսի սուր կերպարանք են ստանում, որ երկիւղ են առաջացնում պալատական շրջաններում:

Սանղրաքի և կալխար ցեղի ձիաւորները իրար հետ վէճ են ունենում, որը յետոյ փոխվում է կատարեալ կռւի և մի ամբողջ ժամ կատաղի հրացանաձգութեան:

Շահի մերձաւորները այն աստիճան գլուխները կորցրել էին, որ չը գիտէին թէ ինչ անեն:

Վերջապէս դէպքի տեղը եկաւ ինքը զինուորական մինիստրը և երկար յորդորներից յետոյ կարողացաւ հանգստացնել ձիաւորներին:

Այդ ընդհարման արդիւնքը եղել է այն, որ կռւի դաշտում մնացել են երկու սպանվածներ ու մի քանի վիրաւորվածներ: („Р. У.“)

—

Թաւրիզից հեռագրում են «Баку» լրագրին.

Բանակցութիւնները Սաթթար խանի ու Էյն-ուդ-Դօվլէի միջև վերսկսվեցին:

Ենթադրում են, որ շահը կընդունի Թաւրիզի անջումանների պայմանները, քանի որ ոյժը Սաթթար-խանի կողմն է:

—

Գիլանից ստացված հիւպատոսական զեկուցումները, որոնց մասին հաղորդում է „Р. Сл.“ լրագիրը, ցնցող կերպով են նկարագրում կատարված գազանային ջարդերի մասին:

Րաշտի նահանգապետը, որին քանիցս անգամ վռնտել էին քաղաքից և նա կրկին վերադարձել էր, կարողացաւ Փիր-Բազարի մօտիկ կղզու վրա կալանաւորել սահմանադրականների ամբողջ ժողովը:

Սարվազներով շրջապատելով 300-ի չափ ամբոխը ամեն կողմից, նահանգապետը նրանց քշեց դէպի ջուրը, և նրանք, որոնք չը խեղդվեցին ջրում, կամ գնդակահարվեցին և կամ հրացանի կոթերով սպանվեցին: Ընդհանուր վրդովմունքը իշխանութեան դէմ այդ ջարդի առիթով չափազանց զօրեղ է, այնպէս որ կառավարչական պաշտօնեաները փախչում են Գիլանից, ոռովհետև ժողովուրդը սաստիկ վրէժխնդիր է լինում թէ Րաշտում և թէ այլ քաղաքներում մնացողներից:

Միևոյն լրագրի ասելով Րաշտի շրջանի Ալյանա քաղաքից նամակ է ստացվել, որ օգոստոսի 18-ին այնտեղ արիւնահեղ ընդհարում է տեղի ունեցել բէակցիօներների ու ձախակողմեան տարրերի միջև: Ձախակողմեաններին ղեկավարում է Սէիդ Աշրօֆը զինված ձիաւորներով, իսկ աջակողմեաններին Ալլահեար-խանը: Նրա որդի Իսպանդար-խանը սպանված է 15 ձիաւորներով: Արիւնահեղ ընդհարում է սպասվում: Սէիդ-Աշրօֆը պատրաստութիւն է տեսնում Րաշտի նահանգապետի դէմ գնալու:

ԹԻՒՐՔԻԱՆ ԱԶԱՏԱԳՐՈՒԹԵԱՆ ՇԵՄՔԻՆ

Երիտասարդ-Թիւրքերի կօմիտէտը բաց է թողել մի շրջաբերական, որտեղ առաջարկում է չը քննադատել Բօսնիայի և Եգիպտոսի վերաբերեալ հարցերը:

Այդ շրջաբերականը իր կծու, խիստ լեզւով բացասական տպաւորութիւն է թողել:

Այդ փաստի մէջ նկատում են ցինդրայի վերականգնումն: («Б.»)

—

Պօլսից օգոստոսի 23-ին հեռագրում են «Рус. Сл.» լրագրին.

«Միութիւն և առաջադիմութիւն» կենտրօնական կօմիտէտը պատգամաւորներ է ուղարկել գաւառները տեղական կարիքները ուսումնասիրելու համար: Այդ պատգամաւորներին ընդարձակ հրահանգներ են տրված: Նրանք պէտք է բացատրեն ազգաբնակութեանը սահմանադրութեան նշանակութիւնը և ապացուցանեն նրա գերազանցութիւնը հին ռեժիմի համեմատութեամբ: Ապա նրանց վրա մեծապէս է դրված լրագիրներ հրատարակել, ակումբներ հիմնել, լուսաւորութիւն և արհեստներ տարածել:

Ներքին գործերի մինիստրը հեռագրական շրջաբերականներ է ուղարկել գաւառական իշխանութիւններին, որով հրամայվում է, որ նրանք արգելեն ազգաբնակութեանը ճնշում գործ դնելու պետական այն պաշտօնեաների վրա, որոնք ուղարկված են երկրագործութեանը զարկ տալու և նրա զարգացման համար անհրաժեշտ միջոցները գործադրելու նպատակով:

«Թանին» լրագիրը գետեղել է մի յօդուած, որտեղ այն միտքն է յայտնում, որ չափազանց լայն ապակենտրօնացումը պետական կառավարութեան սիստեմի մէջ վտանգաւոր բան է ներկայանում:

Ուշագրաւ է այն, որ արքայազն Սաբահէդդինը ևս նոյն միտքն է արտայայտել: Նրա կարծիքով, վտանգաւոր կը լինէր առանձին շրջաններին աւտօնօմիա տալը: Պարզ է, որ երիտասարդ թիւրքերի մէջ կասկած չը կայ այն բանի համար, որ անհրաժեշտ է կռիւ մղել Մակեդօնիային աւտօնօմիա տալու մաքի դէմ:

—

Լօնդօնից օգոստոսի 23-ին հեռագրում են «Р. Сл.» լրագրին, որ Պօլսում եղած անգլիական թղթակիցները խորհուրդ են տալիս անգլիակ. կառավարութեանը և հասարակութեանը աւելի ևս եռանդ ցոյց տալ թիւրքական գործերում, մանաւանդ ֆինանս-

կան աջակցութիւն ցոյց տալ Նոր րեժիմին, որովհետև այլապէս Ֆրանսիան իր համար ֆինանսական մենաշնորհ ձեռք կը բերի և, հետևապէս, դրանով էլ կը գրաւի քաղաքական զօրեղ ազդեցութիւն:

—

Սուլթանի որդիքը այս օրերս այցելել են Կ. Պոլիսը նուաճող սուլթան Մեհէմմեդ Ֆաթէհի դամբարանը: Մեծ իշխանների այդ և այլ մի քանի ուրիշ մզկիթներ այցելելը սաստիկ մեծացնում է սուլթանի ժողովրդականութիւնը մայրաքաղաքի բնակիչների աչքում: Աբդիւլ Համիդը ընդհանրապէս հիմա շատ է աշխատում իր ժողովրդականութեան մասին: Այս օրերս նա Մօնաստիր է ուղարկել 100 Թիւրքական ոսկի ի նպաստ այն նորակազմ միութեան, որ նպատակ ունի ալբանական ուսումնարաններ բանալ: Միևնոյն ժամանակ նա զինուորական կլուբին է նուիրել Սալօնիկում մի տուն իր ամբողջ կահ-կարասիներով, նամակով իր բարեհաճութիւնը արտայայտելով կլուբի անդամներին: («Б. В.»)

—

Բեռլինի լրագիրներին հեռագրում են Կ. Պօլսից, որ, բազմաթիւ հրդեհներից ու անաջող հրկիզութեան փորձերից յետոյ ժողովրդի սարսափի մէջ են ընկել: Քաղաքի մի քանի մասերում սպառնական նամակներ էին կպցրած հրդեհ գցող բանդաների մասին, որոնց Թիւը իբր թէ 2000 ի է հասնում: Հազարաւոր մարդիկ լուրջ ընդունեցին այդ սպառնալիքը: Շատերը գիշերային հերթապահութիւններ են կազմակերպում տների ու խանութները հրդեհից պահպանելու համար: Ի նկատի առնելով ժողովրդի սարսափահար տրամադրութիւնը, երիտասարդ Թիւրքերի պահանջով յետաձգվեցին այն բոլոր ժողովներն ու ցոյցերը, որ պիտի տեղի ունենային ի պատիւ բօլղարական հիւրերի:

Վիէննայից ստացված տեղեկութիւններին նայելով, արևելեան երկաթուղիներ այլևս ապրանքներ չեն ընդունում: Վախ կայ, որ պօստ հեռագրական հաղորդակցութիւնն էլ կը դադարի: («Б. В.»)

—

Մի ամբողջ փոթորիկ առաջացրեց Սալօնիկում դօկտոր Խարլակօվի արտասանած ճառը, որ բօլղարական ղեկավարներից մէկն է ու Սանդանսկու գաղափարակիցը:

Այդ՝ բաւականին յայտնի գործիչը համարձակութիւն ունեցաւ յայտարարելու մի բազմամարդ ժողովի առաջ, որ երիտասարդ Թիւրքերի շարժումը ծագել է զինուորականների ու չինովնիկների դժգոհութիւնից, որոնք իրանց խնդիր դրութիւնից դուրս գալու ուրիշ ելք չէին տեսնում, բացի սահմանադրութիւն մտցնելը: Ոչ մի իդէալական բան չը կայ այդ շարժման մէջ, և մեծ սխալ կը լինէր բօլղարների կողմից, եթէ նրանք իրանց յոյսը երիտասարդ-Թիւրքերի վրա դնեն: Կանցնի մի առ ժամանակ և երիտասարդ-Թիւրքերի իշխանութեան տակ Մակեդոնիայի համար կեանքը աւելի ծանր կը լինի, քան ներկայ րեժիմի օրով:

Բացի դրանից, հակառակ երիտասարդ-Թիւրքերի ղեկավարների կամքի, իրան զգալ կը տայ պանիսլամիզմը, որի դրօշակակիրը հէնց ինքը սուլթան Աբդիւլ Համիդն է: («Б. В.»)

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԽՕԼԵՐԱ

◆ Թիֆլիսի քաղաքային սանիտարական-բժշկական մարմնի տեղեկութիւնների համաձայն, Թիֆլիսում, խօլերա երևալու օրից մինչև օգ. 28-ի առաւօտը տեղի են ունեցել ասիական խօլերայի 30 դէպքեր, որոնցից 21-ը վերջացել են մահով. 30 հիւանդներից 27-ը եղել են բնիկներ, իսկ 3-ը՝ գաւառից:

◆ Թիֆլիսում, խօլերա երևալով, միւս վարակիչ հիւանդութիւնները պակասել են: Ներկայումս քաղաքային սուր վարակիչ հիւանդանոցում պառկած են 7 քութէշաւոր և 1 կարմրուկով հիւանդներ:

◆ Խօլերային բարակից օգ. 28 ին առողջացած դուրս եկան Նոյեմզար Տէր-Սարգսեան, Հերիքնազ Կարապետեան և Հայկ Կիրակոսեան:

◆ Մինչև օգ. 27-ը հակախօլերային պատուաստումներ ընդունել են 1500 հոգի:

◆ Թիֆլիսում խօլերայից բոլորովին ազատ են մնացել 1-ին, 2-դ և 10-դ քաղաքամասերը. հիւանդացածները մեծ մասամբ 5-րդ քաղաքամասից են:

ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՍՆԱԺՈՂՈՎԻ ՄԷՋ

—

Չորեքշաբթի, օգոստոսի 27 ին, քաղաքագլուխ Չերքէզովի նախագահութեամբ կայացաւ քաղաքային սանիտարական գործադիր մասնաժողովի առաջին նիստը:

Մինչև քաղաքային մասնաժողովների գործունէութեանը վերաբերող օրէնսդրութիւնների հետ ծանօթանալը և ներքին գործերի մինիստրութեան վերջին կարգադրութիւնը աչքի առնելը, որով, ի լրումն 1903 թ. օգոստոսի 11-ի առանձին կանոնների, ցանկալի է ճանաչված, որ քաղաքային ինքնավարութիւնները և զեմստվային գործիչները աւելի ընդարձակ մասնակցութիւն ցոյց տան խօլերայի դէմ մաքառման գործում,—մասնաժողովի մէջ հարց յարուցվեց՝ թէ ինչ առնչութիւն են ունենալու միմեանց վերաբերութեամբ Թաղական սանիտարական հոգաբարձուները և վերջերս հաստատված Թաղական կօմենդանտները:

Քաղաքագլուխը յայտնեց, որ այդ հարցը յարուցվեց և նահանգական յանձնաժողովի մէջ, որի նախագահողը խոստացաւ խօսակցել ժամ. գեներալ նահանգապետի հետ և որոշել փոխադարձ յարաբերութիւնների խնդիրը:

Ապա մասնաժողովը հաստատեց սանիտարական հոգաբարձուների և նրանց օգնականների համար հրատարակած հրահանգները:

Քաղաքային սան. գործ. մասնաժողովի որոշումները գործադրելու համար լիազօրներ ընտրվեցին քաղ. վարչութեան անդամ իշխ. Ա. Մ. Արղութեան-Երկայնաբազուկ և սանիտարական-բժշկական տեսուչը:

Մասնաժողովը որոշեց առայժմ սանիտարական խմբերի համար յատուկ բժիշկներ չը հրաւիրել, այլ թողնել Թաղական հոգաբարձուներին հրաւիրել դումայական-Թամասերի բժիշկներին իբրև էքսպերտների հարկաւորութեան դէպքում:

Ցանկալի ընդունվեց քաղաքում գործող բոլոր բժիշկներին Թերթիկներ բաժանել, համարելով նրանց մասնաժողովի անդամներ:

Զեկուցվեց, որ քաղաքը քաղաքային բոլոր բուժարաններում պահում է հարկաւոր քանակութեամբ չը հանգած կիր աղքատ ազգաբնակութեանը տալու համար:

Հաղորդվեց, որ խօլերան տարածվելու դէպքում քաղաքը կարող է իր հիւանդանոցներում տեղաւորել 200 մահճակալներ:

Վերջում յանձնարարվեց սանիտարական բժշկական մարմնին հետեւեալ նիստին ներկայացնել պարտադիր որոշումների նախագիծը:

ՀԱՑԻ ԽՆԴԻՐԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ

—

Ոչ ոքի համար գաղտնիք չէ, որ Թիֆլիսի հացթուխները անյաղթելի են դարձել քաղաքային վարչութեան համար: Ոչ այնքան երկար ժամանակվայ ընթացքում վարչութիւնը մի քանի անգամ իջեցրել է հացի սակագինը, բայց, երկիւղածութեամբ լսելով հացթուխների սպառնական «եթէ գինը չէք բարձրացնի՝ կը փակե՛նք» ը, կրկին զիջել է և դուրս Թողել նրանց ուզած սակագինը:

Թիֆլիսում այժմ Թխած հացը ծախվում է նոյն գնով, ինչ գնով որ էր անցեալ անբերրի տարիներում, երբ, եթէ ոչ հնաւոր, գոնէ մօտակայ նահանգների բոլոր գիւղերը կերակրվում էին Թիֆլիսի պահեստներում տարիներով դարսված դառնացած ալիւրի հացով: Համեմատելով անցեալ չիք տարիների հետ՝ բերքը այս տարի միջակ գոնէ կարելի է համարել այն չափով, որ լիշածս գիւղերը առայժմ հօլա են գնում իրանց ստացածով. արդ՝ ինչ է պատճառը, որ Թիֆլիսի հացը ան տարին էլ մի գին պէտք է ունենայ, մահ տարին էլ:

Սակագինը նշանակող մասնախումբը գտնելով, որ հացը անհամապատասխան, բարձր գնով է ծախվում, իջեցնում է այդ գինը, բայց մի քանի օրից յետոյ նրան բոլորովին հակառակ համոզմունքի է բերում, բատ երևոյթին՝ ոչ թէ իր տեղն ու տեղը կատարած փորձը և կամ բերքի մասին ունեցած Թւական տեղեկութիւնը, այլ միայն հացթուխների «անհաց Թողնելու» սպառնալիքը և «Ռուսաստանի ալիւրը Թանգ է» պաշտպանողական յայտարարութիւնը: Իմ կարծիքով, 1000 աւոր ազգաբնակութեան համար սակագներ նշանակող մարմինը աւելի լուրջ վերաբերմունք պիտի ցոյց տար գոնէ մի այնպիսի կենսական խնդրում, ինչպիսին է ամենօրեայ հացը... Այլապէս՝ ինչպէս բացատրել այսօրվայ իջեցնելը և վաղվայ բարձրացնելը: Այժմ խօլերայով հիւանդութեան աւելի ենթակայ չքաւոր դասին խորհուրդ է տրվում «ուտել շուտ-շուտ և լաւ Թխված հաց»... Երկու խորհուրդն էլ դժուար է կատարել, որովհետև լաւ Թխածը (եթէ կայ) Թանգ է, էժանն էլ խմոր: Իսկ ընդհանրապէս վերցրած, բոլոր տեսակի հացերն էլ մեզանում, չը նայելով գնի բարձրութեան, Թխվում են շատ վատ. և այս բանում համոզվելու համար խորհուրդ կը տայի շրջել հացատները, սակայն փոքրիկ տուպիկներում գտնվողները և ոչ հրապարակային տեղերինը... Արդիօք, ազգաբնակութեանը էժան և լաւ հաց մատակարարելու համար 'քաղաքը՝ բացի սակագին նշանակելուց՝ չունի՞ ուրիշ միջոց...

Բ. Մ.

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ՇՈՒՐՋԸ

—

„Бирж. Вѣд." լրագրին հաղորդում են արժանահաւատ աղբիւրից, որ Պետական Դումայի աշխատանքները վերսկսվելու օրը կը ներկայացվեն մի քանի հարցապնդումներ ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեանը:

Դումայի զանազան ֆրակցիաների միջև բանակցութիւններ տեղի կունենան հոկտեմբերեան կենտրոնի և օպպօզիցիայի հետ համաձայնութիւն կայացնելու՝ ազատ ուսուցչուհիների առիթով հարցապնդում անելու համար:

Հիմք կայ կարծելու, որ բացի ծայրայեղ աջակողմեաններից ու ազգայնականներից՝ հարցապնդումի տակ կը ստորագրեն Դումայի բոլոր ֆրակցիաների բոլոր լիդերները: Ապա հարցապնդում կանվի պրոֆ. Պետրաժիցկուն համալսարանից հեռացնելու մասին:

Ֆրակցիաները օգուտ կը քաղեն հարցապնդումներից ընդհանուր քննադատութեան ենթարկելու ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան գործունէութիւնը:

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

(Սեփ. Թղթ.)

—

Հին-Նախիջևան, 26 օգոստոսի

Ղարախան բէկլուի տէր-Պօղոսն անցեալները ինչ որ «անիշխանական կուսակցութիւնից» նամակներ է ստանում, որոնցով մահվան սպառնալիքների տակ նրանից 300 րուբլի փող են պահանջում: Տէրտէրը մի քանի օր խոյս է տալիս այդ պահանջից: Բայց մի գեղեցիկ օր էլ 100 րուբլու կնքված մի ստացական ձեռքներին (կնիքը կրում է անիշխանականների սովորական դաշոյն, ատրճանակ և այլն էմբլէմները) տէրտէրի տունն են գնում երկու երիտասարդ: Բարեբաղդաբար տէրտէրի փոխարէն դուրս է գալիս տէրտէրի կինը: Երիտասարդները յանդուգն և վճռական տոնով պահանջում են «իրանց հասանելիք» գումարը. բարձրանում է աղմուկ, դուրս են գալիս գիւղացիները երիտասարդներին իրանց գիւղից հեռացնելու, որի ժամանակ անիշխանական պարոնները դաշոյնով գիւղի մէկին վիրաւորելով փախչում են: Գիւղացիները անձամբ ճանաչելով երիտասարդներին՝ դիմում են օրինաւոր իշխանութեանը, որը նոյն գիշերվայ ժամը 2-ին ձերբակալում է երիտասարդներին:

Ամսիս 24 ին Գիւմուշ հայկական գիւղում երեկոյեան մի կռւի ժամանակ միջամտում են հասակաւորները: Կռիւը հետզհետէ սուր կերպարանք է ստանում և դուրս են բերվում հրացաններ. սպանվում են 2 հոգի, որոնցից մէկը միանգամայն մի անմեղ գիւղացի է լինում, որ եկել է կռւող կողմերին հաշտեցնելու: Սպանվողները Շահնազարեանց Թայֆայից են պատկանում, իսկ սպանողը Գիւլնազարենց. Մնացականն է լինում: Սպանող Թայֆայից առայժմս 4 հոգի բանտարկված են: Կասկածվում է, որ արիւնը 2 անմեղ սպանութիւններով չը սահմանափակվի:

Մի քանի ամիսներ սրանից առաջ Աստապատ հայկական գիւղում գիշեր ժամանակ անյայտ անձնաւորութիւնների ձեռքով սպանվում է տեղական տանուտէր Յարութիւնը: Կասկածանքով ձերբակալվում են մի քանի անձինք, որոնց մէջ լինում են և Թուրքեր: Ոստիկանութեանը իբրթէ աջողվում է վերջապէս ձերբակալել իսկական մարդասպաններին:

Ահրիմանեան

ԵՐԵՒԱՆԻ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐՈՑԸ ԵՒ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆԸ

(Նամակ խմբագրութեան)

—

1908/9 ուս. տարեշրջանին Երևանի Թեմ. դպրոցի համար վերընտրվեցին հոգաբարձուներ՝ Ամիրեան, Կամսարական, Արղութեան, Կանդուրալեան, բժ. Մելիքեան, Մուշեղեան, Օհանեան: Նորեր ընտրվեցին՝ Նազարեթեան, Ահարոնեան և բժ. Տէր-Միքայէլեան:

Նախկին սովորութեան համաձայն, տեսչի զեկուցմամբ կրկին քաշքշվեց Թեմ. դպրոցի ուսուցչական խումբը, և, առանց հիմնաւոր պատճառի, մինչև անգամ արձակվեցին 20—30 տարի նոյն դպրոցում ծառայող ուսուցիչներ:

Իմ այս նիւթից դուրս է իւրաքանչիւր անձնաւորութեան վրա առանձնակի կանգ առնելը. միայն այսքանը կասեմ, որ հներից՝ Մուշեղեանը, իսկ նորերից՝ Նազարէթեան և Ահարոնեան են մտածում դպրոցի շահի մասին, բայց, փոքրամասնութիւն կազմելով, դրանց ձայնը մեծ մասամբ խեղդվում է:

Մեր Թեմական դպրոցներում սովորում են ընդհանրապէս աղքատ և միջին դասակարգի որդիք: Երևանի Թեմ. դպրոցի հոգաբարձութիւնը տարեկան 19—20 հազար ծախք է անում մօտաւորապէս 360—400 աշակերտի վրա: Թէև տարեկան միջին Թւով աւարտում են 10—15 աշակերտ, բայց միևնոյն ժամանակ տարեկան միջին Թւով, սկսած նախակրթարաններից մինչև 6-րդ դասարանը, դուրս են գնում զանազան պատճառներով 70—80 գրագէտ աշակերտներ: Նշանակում է՝ Թեմ. դպր. իւրաքանչիւր տարի տալիս է հասարակութեան 10—15 աւարտած աշակերտներ և միևնոյն ժամանակ մօտաւորապէս 70—80 գրագէտներ, և ներկայ հանգամանքներում, իմ կարծիքով, վերջինը աւելի գնահատելի է:

Աւելի քան 70 տարի է, որ հասարակութեան բոլոր դասակարգերի անդամների մի խոշոր տոկոս գրագիտութիւնը սովորել է Թեմ. դպրոցում:

Ներկայ հոգաբարձութիւնը փակեց I և II նախակրթարանները իրանց զուգընթացներով: Այսօր նա փակում է հասարակութեան որդոց առաջ վերջին զուգ. նախակրթարանների դռները ևս: Նախակրթարաններում միջին Թւով սովորում են 200—240 և աւելի աշակերտներ:

Այսօր այդ բոլորը մնում են փողոցներում, և հասարակութիւնը միանգամայն անտարբեր նայում է դրան:

Պէտք մնալ, որովհետև հասարակութեան ստորին և միջին դասակարգը չէ կարողանալու տարեկան 5—10 ր. Թոշակի փոխարէն տալ 50—100 ր. Թոշակ իր որդուն կրթելու համար: Չէ կարող, որովհետև ոչ մի հնարաւորութիւն չունի... Ահա այսպէս, շնորհիւ հոգաբարձութեան սխալ մտածողութեան, տգիտութիւնը և խաւարը պիտի նորից իրանց սև քօղը ձգեն ժողովրդի այդ խաւերի վրա:

Եթէ մեզ կասեն, Թէ մեր ստորին դասարանները լիքն են և մինչև անգամ տեղ չունենք. կամ եթէ մեզ կասեն, թէ ծխական դպրոցները մեզ միշտ պատրաստի աշակերտներ կը տան, մենք դրան հաւատալ չենք կարող: Նախ, որ եթէ ստորին դասարանները լիքն են, պատճառն այն է, որ զուգ. նախակրթարաններում միշտ եղել են 45—55 և աւելի աշակերտներ, և երկրորդ՝ ծխական դպրոցները չեն կարող պատրաստի աշակերտներ տալ, նախ՝ որովհետև փորձն է ցոյց տուել այդ, երկրորդ՝ ծխական դպրոցները չեն համապատասխանում իրանց ծրագրով և վերջապէս մենք քանի՞ ծխական դպրոց ունենք Երևանում, ինչ դիրքի վրա են գտնվում այլն և այլն:

Եթէ հոգաբարձութիւնը կասի, Թէ մենք նախակրթ. փակելով կամենում ենք ծախքից Թեթևանալ և դպրոցը պարտքից ազատել, այն ժամանակ աւելի լաւ է 5-դը և 6-դը փակել, որովհետև դրանց գոյութիւնը պահպանելու համար հազարներ են տանում՝ միևնոյն ժամանակ Թողնելով և հազարներով պարտք:

Նախակրթարանները իրանց տուած Թոշակով համարեա Թէ պահպանվում են և եթէ մասամբ պակասում է, կարելի է փոքր ինչ բարձրացնել Թոշակները և ոչ Թէ փակել:

Ասացէք խնդրեմ, նախակրթարանները փակելով այդ հարիւրաւոր աղքատ մանուկներին ուր էք ուզում ուղարկել: Նախակրթարանները փակելով, բացի վնասից ինչ օգուտ պիտի տաք հասարակութեանը: Ինչու պէտք է առաւ կերպով այդ խղճուկ հասարակութեան հազարները դուրս դրվեն մօտաւորապէս 150 աշակերտի վրա և ոչ Թէ 400 ի: Ոչ, պարոններ, բարեխղճութիւնը և առողջ դատողութիւնը պահանջում են նախ հոգալ աղքատ և միջին դասակարգի կարիքը և ապա մտածել բարձրի վրա:

Եթէ Թեմական դպրանոցը լինէր մասնագիտական դպրոց, ոչ ոք և ոչ մի դէպքում իրան իրաւունք չէր համարի դատել այսպէս. բայց որովհետև դա այսօր մի միջնակարգ դպրոց է և պիտի ծառայի միջին դասակարգի շահերին, իմ կարծիքով ամեն ոք պարտաւոր է դատել այսպէս:

Տուէք հասարակութեանը միջին դպրոցներ, ապա իրաւունք համարեցէք ձեզ փակել նախակրթարանները նրա որդիների առաջ: Օրինակ ձեզ Ներսիսեան դպրանոցը, Լազարեան ճեմարանը, գիմնազիաներ և այլն:

Գիւղացիներից քանի՞ տոկոս իրանց աղ-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԽԱՆԴԱՎԱՌՈՒԹԵՆԷՆ ԵՏՔ

—

Տարօրինակ ժամանակի մը մէջ կը գտնուինք. Թիւրքիոյ ժողովուրդներուն համար փոխանցումի փափուկ և դժուարին շրջան մը:

Հիմակուհիմա ոչինչ կարելի է նշմարել անծայրը խանդավառութենէ մը զատ, որ ելեքտրական քաշող զօրութեան պէս դէպ իրար կը մղէ նոյն երկրին տարասեռ զաւակները, դեռ երէկ իրարմէ բաժան, զիրար ատող և հալածող:

Թունաւոր և սպանիչ րէժիմի մը տակ եթէ ոչ հաւասար եղանակով, բայց իր ամբողջութեան մէջ տառապող ժողովրդոց ազատութեան այս գեղածիծաղ արշալոյսին և նախօրէին մէջ երևան եկող խանլայեղ և ծայրայեղ ոգևորութիւնը, թէև անիմաստ՝ և նոյն իսկ վտանգաւոր քիչ մըն ալ՝ բայց ներելի, պարտք կը դնէ մեզ վրայ միմիայն ուշադիր հետևիլ ըլլալիքներուն, սահմանադրութեան, ազատութեան չափաչուն հաչակումներուն հետևանաց, վճռականապէս տեսնելու և համոզուելու թէ ո՞ր աստիճան օգուտ և դրական բարիքներ ակնկալել կարելի պիտի ըլլայ այս նորածին սահմանադրութենէն:

Դրութիւնը, պարզաբար նկատելով, կարծուածէն աւելի բարդ է: Թիւրքիոյ բարեկարգիչները շատ բան կը մոռնան և կանտեսեն, ներքին և մանաւանդ արտաքին, ու իրենց խելայեղ ուրախութեան մէջ՝ ծայրայեղօրէն անխոհեմ՝ անոնք չեն յիշեր և մտաբերեր, որ Եւրոպա մը կայ հոն, իրենց քովիկը, որ իր շահէն մազ մը իսկ չպիտի զոհէ ի սէր Թիւրքիոյ վերածնութեան և չպիտի դադրի՝ բան մը որ իրեն համար դժուար պիտի չըլլայ՝ զայն խանգարելու ջանալ, եթէ առիթը յարմար դատէ:

Թիւրքիոյ սահմանադրութիւնը այդ կողմէն դժբաղդաբար շատ ջուր կրնայ վերցնել, ու նոր Թիւրքիան զայն նախատեսելու և արգիլելու չափ քաղաքական հեռատեսութիւն մը չի ցուցներ. անհրաժեշտ պարագայ մը՝ որ իր ուրախութեանց և ոգևորութեան մէջ խեղդուած մնալու չէր *):

Ինչևէ, արդէն ըսինք մեր նախորդ Թղթակցութեան մէջ, թէ առանց խանդավառ մը ըլլալու կրնանք սակայն ուրախակցիլ և ժամանակցիլ ձեռք բերուած արդիւնքին: Ալեկոծ ծովի մը վրայ ուժասպառ և օրհասական նաւաբեկեալներու համար՝ փրկութեան ամենափոքր յոյս մը իսկ ներշնչող շիւղը չարհամարհուելով ընդհակառակն ազատութեան լաւագոյն առիթը կրնայ ըլլալ:

Այս վերջին 10—15 տարիներու միասակար և սխալ ըմբռնուած ու գործադրուած յեղափոխական յորջորջուած շարժումը՝ երկրին ժողովուրդը արդարև անկումի այն ծայրագոյն աստիճանին իջեցուց, որուն մէջ յամառիլ մնալը և շարունակելը պիտի նշանակէր ազգին գիտակցաբար մահացումը: Հայը հասարակ ինքնաճանաչութեան և ինքնապաշտպանութեան այբ ու բենը չը գիտցած, զէնք յախուռն և անբնական գործունէութիւն մը ձգել ուզեցին:

Միմիայն Վանայ անցքերը վեր առած՝ մօտաւորագոյն մեր գործունէութեանց՝ իրենց տխուր իրականութեանը մէջ պերճախօս ապացոյցը կը մնան՝ ինքզինքնին յեղափոխական կոչած տարրին գործունէութեանը բառական իմաստով կատարեալ անհանկութիւնը և ազգին շահուց տեսակէտով բացասական արդիւնքը ցուցնելու համար:

Այսօր, երբ վերջակէտ մը՝ տեական կամ ոչ՝ սփոփարար շունչ մը առնել կուտայ մեզ, երբ ընդհանուր մոռացութիւն մը առնենք անցեալին ծոցը Թաղելու կը տանի (և մաղթենք՝ յաւիտենապէս), երբ ուրիշ պարագայի մը մէջ ամօթը, նողկանքը և անպատաշաճութիւնը մեզ պիտի արգիլէին դանինք հրապարակելու, կրնանք այլ ևս անվերապահ կերպով՝ գէթ մեր ժամանակակից կեանքը վերլուծող ապագայ պատմագիրներուն ուսումնասիրութեան նիւթ տալու մտօք՝ վերջին անգամ ըլլալով յիշել թէ հոն, տարաբաղդ հայրենիքը՝ հայութեան սիրտ Վասպուրականը ինչ ընտանի և մտահայցու հարուածներու տակ տառապող կը հիւծէր արիւնաքամ, և ինչպէս տաանց պատճառ վերջին հերոսները այլևս մառցնել տուին ամենէն ինկած Իւսօներն անգամ...

Ահա Վանէն հասած իրազեկ նամակներէ քանի մը հատուածներ միայն:

«Տեղս խուզարկութիւնք խիստ եղած են: Դաշնակցական չէֆերէն բժիշկը քանի մը ընկերներով կը շրջապատուի, բայց նա գէթ պարտաճանաչ կը լինի կռուելով ձեռքով զօրաց շղթան և փախչիլ: Իսկ միւս շէֆը Արամ, որ վանցիներուն դէմ շատ կը խրոխտար, տասնեակը ընկերներով Թուխլուղի Թաղին մէջ հոր մը պահուըտած, զինուած, զէնքերը ձեռք կը ձերբակալուին: Արամ, կըսուի Թէ՝ բանտային չարչարանքներուն չդիմանալով, դաւաճան Իւսօյի պակաս Թողածը ինքն է լրացուցեր, կառավարութեան մատնելով մնացած զէնքերը և մարդիկը: Նոյնիսկ կը պատմեն, որ ոստիկանաց հետ մինչև Արճակ գիւղը գացած, իր ձեռքով պահուած զէնքերը յանձնած է:

Գիւղացիք, տեսնելով այդ անարգ դաւաճանութիւնը, միւսներուն ըսած են. «Այս այն մարդն է, որ անցած տարի մեր եզները բանի ծախել տալով՝ առաւ մեզ այս զէնքերը բերաւ, այժմ ձեզ մատնելու համար...»:

Եւ վերջապէս յունիս 16 Թուակիր մը պարզապէս պժգալի է.

«Ներկայիս կուզամ աւերակ հայրենիքի սև գուժկանը լինելու: Անշուշտ գիտէք, Թէ դաշնակցական կուռքը փշրուեցաւ. Նրա հրէշային կազմից պոկուող գեռուններն աբարքները յաւէտ սև ներկեցին վասպուրականցիի ճակատը և արիւնաքամ ժողովուրդը յուսախաբութեան անդունդը գահավիժեցին: Աւաղ, ազատութեան օղակառոյց դղեակները կորան, մեր երազները վիժեցին ու արտասահմանեան ապականեալ խըմբակալութիւնը սարկաւութեան ժանտ շղթաները աւելի ևս ամրացրեց»:

Ու պատմելով դաւաճան Իւսօյին քաջարի Տ. Թ. ի ձեռամբ սպաննուիլը սարկաւագ զինուորաց հրամանատար Հիւսնիէն քովը և այդ պատճառաւ եղած ջարդը, խուզարկութիւններ ընելու համար զինուորներու և Թնդանօթաց կեդրոնացումը Այգեստանի կարևոր մասերու մէջ, նոր հասնող Ջէլալփաշայի պահանջը և այլն, նամակագիրը կը շարունակէ. «Խուզարկութեան երկրորդ օր մատնուեցան Արամ, Տաճատ, Ակօն, Մէլօեան, Ծիտաղեան, Գէորգ և այլն, և անձնատուր եղան, իսկ բժիշկ քաւասուն հոգւով դէպի հարաւ փախաւ, հոն բոլոր վանեցիներին եւ ղրկեց (մի քանիսն ալ սպաննեց, կասեն) ու ինքն հեռացաւ:

«Այնուհետև ամէն դաշնակցական հերոս եղաւ դաւաճան հերոս, իրար ետևից մատնուեցան չորս մթերանոցներ, մօտ 300 հրացան և շատ մը պատրոն: Ձերբակալեալներէն մէկ քանիսը տանջանաց տակ չը դիմանալով՝ դաւաճանեցին և կարգով դուրս բերին ու կը բերեն 1000-է աւելի հրացաններ և քանի մը հարիւր հազար պատրոն, կոմիտէի արձանագրութիւնը, ելումուտքը և բոլոր Թաքստոցների ցուցակները, որոնց նայելով առանց նեղութեան դուրս բերին նորից բաւական շատ մեծ ու փոքր ռումբեր խմոր, անուններ ի ցուցակ, ճամբաներ, իրենց հետ յարաբերող քիւրդերի և

*) Հեռագիրները հաղորդեցին, որ երիտ.-Թիւրքերը ոչ միայն սատրիական երկաթուղիի արտօնութիւնը հաստատել կուզեն, այլ այդ գործիչները Պարսկաստան ալ հասած են, համոզելու անոնց Թիւրքիոյ հետ միանալով «համիսլամական» հոծ և միակ պետութիւն մը կազմելու համար: Ու դեռ երէկը մէկ, այսօր երկու... Մ.

քատ գրպանով կարող են իրանց որդիներին ուղարկել պատրաստականներից զուրկ Թեմական դպրանոցը, և մինչև այդ հարցի պատասխանը պարզ չէ ինքնին։ Արդի պայմաններում փակել նախակրթարանները, միանգամայն աննպատակ և նոյնիսկ վնասակար է Երևանի Թեմի և քաղաքի աղքատ և միջին դասակարգի համար։

Ժողովրդին նախ և առաջ պիտի տալ որքան կարելի է շատ գրագէտներ։ Զրկել աղքատ և միջին դասակարգի որդոց՝ գրագիտութիւնից, դա նշանակում է զուր տեղ վատնել ժողովրդի կոպէկները։

Գուցէ հոգաբարձութիւնը պատասխանի, թէ պիտի բարձրացնել Թեմական դպրանոցը՝ չը պիտի խնայել հազարներ՝ հրաւիրելու համալսարանականներ եայլն եայլն։ Դրա դէմ հարկաւ ես ոչինչ չունեմ ասելու. այո, նոյնը և գուցէ աւելին ես կասեմ, բայց ժողովրդի առակն ասում է՝ «վերմակից չափ ոտքդ մեկնիր»։

Ո՞ւմ հաշւին գրենք այս ուսումն. տարեվայ հոգաբարձութեանդ 7—8 հազար րուբլի պարտքը։ Ովքե՞ր էին ձեր հրաւիրած համալսարանականները, որոնք ստանում էին խեղճ աղքատ ժողովրդական կոպէկներից հաւաքած հազարները։ Դրանցից ով որ համալսարանին է աւարտել։ Բարեհաճեցէք, պարոններ, պատասխանել։

Այդպէս չէ կարելի վարվել հասարակական հիմնարկութեան հետ։ Թողէք խնամիական և ընկերական կապերը։ Հասարակական հիմնարկութեան շահը պահանջում է արդարադատ լինել։

Խղճացէք դպրոցին. մեղք են հասարակութեան որդիքը. ափսոս են ժող. կոպէկները։

Ս. Սմբատեան

ՓՈՔՐԻԿ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Ծաղրի և արհամարհանքի գագաթնակէտն է դէպի ժողովրդի գիտակցութիւնը «Զանգակի» № 42-ում զետեղված «Թեմական ժողով» ընկավարող յօդուածը...

Այդ յօդուածը կարդալիս յիշեցինք այն գողի մասին առածը, որը վարունգ գողանալիս բռնվում է և, որպէսզի ազատվի, սկսում է փախչել և գոռալ՝ «գողին բռնեցէք»...

Լրագիրը գոհունակութեամբ շեշտելով կաթողիկոսական անդրավառ կարգադրութիւնը՝ հին պատուիրակներին թողնել ընտրութիւն կատարելը, սակայն որպիսի կարգադրութիւնը դեռ ես յայտնի չէ թէ որ օրէնքի կամ յօդուածի հիման վրա է,—գուցէ պրոֆէսիոնալ գաղտնիք են համարում, կամ յանուն սուրբ գործի,—այնուհետև յիշված յօդուածում զետեղված են հետևեալ մարգարտաշար տողերը. «Դժբաղդաբար այդ պարտականութիւնը (Թեմական ժողովներ հրաւիրելը) անտես թողնվեց և առաջնորդը երկու տարի անցնելուց յետոյ հարկաւոր համարեց Թեմական ժողովի գումարումը»...

Ապա ինչ էր անում դեմոկրատիկ և աշխատաւորական հոգաբարձութիւնը. մի՞թէ նա չէր զգում այդ ժողովների կարևորութիւնը և պակասը. ինչո՞ւ այդ գովելի և եռանդուն հոգաբարձութիւնը մի անգամ չը յիշեցրեց առաջնորդին այդ մասին, մինչդեռ ընտրութեան խնդրում համեստութիւն չունեցաւ լռելու՝ երբ խնդիր կար իրանց լինելու կամ չը լինելու մասին, և այնքան տարրական քաղաքավարութիւն չունեցաւ սպասելու, որ ժողովուրդը ինքը իրան իրաւունքների սահմանը որոշէ, այլ այդ պարոնները գովելի եռանդով ժողովներ գումարեցին և ռեզոլիւցիաներով տեղականին և հասարակութեան աչքին թոզ փչել ջանացին... Կրկնում ենք, այդ քաջամարտիկները չէին զգում իրանց վրա պարտականութիւնը՝ հաշւետւութեան դուրս գալ իւրաքանչիւր տարի...

Ահա «Զանգակի» միւս մարգարէանները.

«Այդ բոլորից յետոյ նորից զանգահել, յետաձգել Թեմական ժողովը, կը նշանակէ նոր յանցանք կատարել կրթական մի խոշոր հիմնարկութեան և ժողովրդական ներկայացուցչութեան վերաբերմամբ»։

Եթէ «Զանգակը» առաջնորդին յանցաւոր է համարում, ապա ուրեմն մենք բոլորովին եղեռնագործ ենք համարում ժողովրդական իրաւասութեան և կրթական մի խոշոր հիմնարկութեան վերաբերմամբ ներկայ հոգաբարձութեան ամբողջ կազմը, որը—անհաւասարիկ երկու տարին լրացաւ—աւելորդ է համարում կատարել հաշիւ ներկայացնել ժողովրդին, իսկ ծակ ու ծուկերից ինչ որ մի-մի հոգաբարձուներ՝ ագիտացիայի տաք մօմենտում քաջութիւն անգամ չունենալով շղարշը երեսից քաշելու՝ խունկ են ծխում դէպի իր ընկերների քթածակերը...

Հերիք է, պարոններ, ծամածռութիւնները և լարախաղացութիւնը չափ ու սահման ունեն,—ունեցէք լռելու մի փոքրիկ համեստութիւն...

Անցնենք հետևեալ մտքերին.

«Թեմական ժողովը գումարվելու է ոչ թէ միայն քուէներ տալու, ընտրութիւններ կատարելու համար, այլ հաշիւ, զեկուցում ստանալու Ներսիսեան դպրոցի երկամեայ անցեալի մասին և նոր հրահանգներ տալու եկող երկու տարիների մասին։

«Որպէսզի Թեմական ժողովի ժամանակը պատգամաւորները նախապատրաստուեն, իրանց ընտրող ծխականների հետ խորհրդակցեն քննելիք հարցերի վերաբերմամբ—անհրաժեշտ է հրաւէրի հետ միասին ուղարկել նաև ժողովի օրակարգը, հարցերի ցուցակը»։

Մի՞թէ... Ուրեմն, հայ ժողովուրդ, հանիր գլխարկդ և մի մեծ շնորհակալութիւն յայտնիր «Զանգակին» և հոգաբարձութեան, որ այդքան մեծահոգի է դէպի քեզ և քո իրաւունքները յարգում է... ծանուցանելով ի գիտութիւն՝ հարցերի ցամաք ցանկը...

Ապա ուրեմն չէ՞ք ուզում, ժողովրդի իրաւունքներից և անունից ճառող ճոռոմաբանող պարոններ, ժողովրդի կատարեալ սեփականութիւնը դարձնել ձեր երկամեայ գործունէութեան թէ նիւթական, թէ ուսումնական և թէ բարոյական գործունէութեան տպագրած հաշիւները. մի՞թէ դուք գտնում էք, որ բաւական է ժողովրդին կերակրել ցամաք հարցերի ցանկերով... ո՛չ, պարոններ, այդպէս չէ դեմոկրատիկ ուղղութեան դէմքը. անհաւասարիկ՝ ականջներիդ օղ շինեցէք. «Ամեն ինչ ժողովրդի համար և ժողովրդի միջոցով»։

Մենք կտրական կերպով պահանջում ենք ներկայ հոգաբարձութիւնից—տպագրված մանրամասն հաշիւ Ներսիսեան դպրոցի երկամեայ գործունէութեան հանդերձ դրամական մնացորդներով՝ դպրոցի ղեկը ստանձնելիս և այժմ, դրամագլուխների յիշատակումներով՝ կալուածների համեմատական թւերով նախորդ տարիների եկամուտների հետ, ուսումնարանական գործի մանրամասն յիշատակումներով և այլն։

Այդ հաշիւները պէտք է քննվեն ծխական ժողովներում և ժողովուրդը պէտք է իր պատուիրակներին դիրեկտիւներ տայ թէ անցեալ գործունէութիւնը գնահատելու և թէ ապագայի վերաբերմամբ, այլ ոչ թէ «Զանգակի» ռեցեպտով պատուիրակներ դառնան և ուզածները կատարեն. շատ ջուր է անցել նրանց ընտրութեան օրերից և հասարակութեան մտածողութեան եղանակը արմատականապէս արդէն փոխվել է և որից ի զուր չէին այնքան սարսափում որոշ կուսակցութեան ընտրեալները...

Վերև յիշված հաշւում ներկայ հոգաբարձուները պէտք է զանց չառնեն պարզելու՝ թէ ինչպէս եղաւ, որ երկու տարվայ մէջ հալվեցին մի քանի տարվայ կուտակված եկամուտները և ստացված նրանց օրով գանձարանից, և այժմ այնքան սնանկութեան հասցրած դպրոցի սնդուկը, որ փակված են դասարանները և հարիւրաւոր երեխաների բօղազները դուրս կտրած և փողոց շպրտած։

Ի՞նչ հաշիւներով և դիտումներով բաց արիք զուգընթացները, ընդունեցիք բազմաթիւ աշակերտներ և այժմ փակում էք և այդ աշակերտներին փողոց շպրտում... Հաշիւ, պարոններ, հաշիւ, ապա թէ ոչ՝ դժուար թէ մեղքերից կարողանաք բառնալ հազարաւոր շրթունքների անէծքները...

Ինչ էիք ուզում կատարել և ինչով վերջացաւ կարրիկատուրային ուսուցչանոցը։

Ինչո՞ւ տարիներով դպրոցապատկան նկուղների և խանութների ճակատին փակցրած է «отдается» ճնշող թերթիկները. ո՞ւր է ձեր տնտեսութիւնը. և այլն և այլն բազմաթիւ ինչուներ։

Երբ այս ճնշող և մաշող հարցերին արդարացնող պատասխաններ կը տաք և ժողովուրդը գոհ կը մնայ ձեր պատասխաններից, այն ժամանակ կարելի է արդէն խօսել հին պատուիրակների ձեռքով ընտրութիւններ կայացնելու, ապա թէ ոչ՝ այժմեական խնդիրը ներկայ հոգաբարձութեան և նրանց ընտրող պատուիրակների ժողովրդական կողմից վստահութեան խնդիրն է և պէտք է հոգաբարձութիւնը և հին պատուիրակները—եթէ կաթիլ անգամ ինքնասիրութիւն ունեն և տոգորված են դպրոցի շահերով ու յարգում են ժողովրդի իրաւունքները—առաջ քաշեն ամենից առաջ «վստահութեան հարցը»։

Այս է ամենաառաջին լուծելու հարցը։

Շիրին

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Կովկասի Փոխարքայի պաշտօնակատար գեներալ Շատիլով օգոստոսի 28 ին Կոջորից վերադարձաւ Թիֆլիս։

◆ Լ. Ն. Տոլստոյի յոբելեանի առթիւ Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը որոշել է ուղարկել շնորհաւորական հեռագիր և միջնորդել առաջ, որ քաղաքային դպրոցներից մինը անուանել Տոլստոյի անունով, կազմել քաղաքային դպրոցների աշակերտների համար գրական ցերեկոյթներ, բաժանել աշակերտներին Տոլստոյի էժան հրատարակութիւններից և գրադարանի համար ձեռք բերել նրա հեղինակութիւնների լիակատար ժողովածուն։

◆ Բարձրագոյն կարգադրութեամբ Բագուի նախկին գեներալ նահանգապետ Ս. Ֆադէևին տրված է Բագուի քաղաքի պատուաւոր քաղաքացու կոչում համաձայն տեղական քաղաքային ինքնավարութեան միջնորդութեան։

◆ Թիֆլիսի նահանգապետը առաջարկել է Թիֆլիսի նահանգի քաղաքային ուպրաւներին, հացի և մսի նոր սակագները շուտով գործադրելու համար, ներկայացնել իրան պարտաւորապէս այն որոշումները, որ կայացնում են քաղաքային լիազօրների ժողովները այդ սակագների մասին։

◆ Վերադարձաւ Թիֆլիս և ստանձնեց իր պաշտօնը քաղաքային սանիտարական բժշկական տեսուչ բժ. Կ. Ստեփանեան։

◆ Երկրագործութեան և հողային բարեկարգութեան գլխաւոր վարչութեան անտառային բաժինը տեղեկացրել է Կովկասի Փոխարքայի դիւանատան, որ նա առաջարկել է երկրագործութեան և պետական գոյքերի Բագու-Դաղստանի կառավարութեան մշակել կապալառուական կոնդիցիաներ Բագուի նահանգի Լէնքորանի գաւառում գտնվող Անջինայի և Արկէվանի հանքային աղբիւրները կապալով տալու համար։

◆ Նկատի առնելով որ վերջին ժամանակներս Թիֆլիսում երևան են հանվել անասուններում ստամոքսի հիւանդութիւններ, որոնք առաջ են գալիս ուտելիքի հետ միասակար նիւթեր խառնվելուց, Կովկասի Փոխարքայի դիւանատան կարգադրութեան համաձայն, կենդանիների խնամատար կովկասեան ընկերութիւնը դիմել է Թիֆլիսի քաղաքային վարչութեան, խնդրելով հաղորդել իրան այն հետևանքները, որոնք ստացվեցին Արվանեանի ալիւրը անալիզի ենթարկվելուց յետոյ։ Ինչպէս յայտնի է, այդ ալիւրն անպէտք է ճանաչված և յարկացված է անասուններին կերակրելու համար։

◆ 1908/9 թ. թ. ուսման տարվայ սկզբից Թիֆլիսի 2-րդ արական գիմնազիայում ուսման վճարը 70 րուբլուց դառնում է 80 րուբլի։

◆ «Закавказье» լրագրի երէկվայ համարը ոստիկանութիւնը գրաւեց։

◆ Անցեալ տարի Թիֆլիս քաղաքից վերցրին 241 նորակոչ զինուորացուներ, իսկ այս տարի վերցնելու են 184։ Այս տարվայ գրքերում ցուցակագրված են 543 նորակոչներ, որոնցից 145-ը արտոնեալ դասերից են։ 1-ին կարգի արտօնութիւնով օգտվում են 157, 2-րդ կարգի արտօնութիւնով 19 և 3-րդով՝ 13 հոգի։

◆ Օգոստոսի 27-ին նշանակված կովկասեան ֆիլօկսէրային մասնաժողովի նիստը չը կայացաւ. երկրորդ նիստը կը կայանայ երեքշաբթի, սեպտեմբերի 2-ին։

◆ Պետերբուրգ մեկնեց երկրագործութեան մինիստրութեան Կովկասի լիազօր Մեդվէդեվը։

◆ Ներկայումս Մոսկվայումն է գտնվում և դիտում քաղաքային սպանդանոցը և գազի գործարանը՝ Թիֆլիսի քաղաքային վարչութեան անդամ Ա. Խատիսեանը։

◆ Բաթումի ժամ. զինուորական նահանգապետի կարգադրութեամբ 10 օրով դադարեցված է «Бат. Гол.» լրագիրը՝ իր № 191-ում տպած այն յօդուածի համար, որով խիստ քննադատութեան է ենթարկվում ռուսական սինօդի՝ Տօլստոյի մասին հրատարակած ուկազը։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Օգոստոսի 28-ին Օլգինսկի փողոցում յանկարծամահ եղաւ ալիւրի գործարանի բանւոր Մարտիրոս Սահակեանը։

◆ Օգոստոսի 28-ին Մետեխի բանտում յանկարծամահ եղաւ քրէական բանտարկեալ Գէորգի Անանիևը, 22 տարեկան։

◆ Օգոստոսի 28-ին, երեկ. ժամը 9-ին, Զուբալովի տանը, Միքայէլեան փողոցում, ինչ-որ թունաւոր նիւթից վախճանվեց Թիֆլիսի րէալական դպրոցի 5 րդ դասարանի աշակերտ Նիկոլայ Շատրովը։ Նրա մօտ գտնվեց մի թուղթ, որի մէջ ասում է, որ իր մահվան մանրամասնութիւնները կարելի է իմանալ ինչ-որ «Փորուց»։

◆ Օգոստոսի 28 ին, երեկ. ժ. 9½-ին, Թիֆլիսի գնդի պօրուչիկ Ալեքսանդր Պավլօվսկին, անցնելով կառքով Վօրօնցօվսկի փողոցով, Շէյթան-բազարի մօտ, հարբած դրութեան մէջ, կրակեց մի քանի անգամ ատրճանակից, որով մի գնդակով թեթև վիրաւորեց կրծքի աջ կողմից պարսկահպատակ Հասան Ջաւադ օղլուն։ Վիրաւորվածին տարան Միքայէլեան հիւանդանոց, որտեղից բժշկական օգնութիւն ցոյց տալուց յետ՝ թողին ազատ։

◆ Թիֆլիսի ժամ. գեներալ նահանգապետի կարգադրութեամբ տանտէրեր՝ Արտեմ Մուսայէլեան, Մինաս Սարգսեան, Ալեքսանդր Շչերբինին, Արտեմ Փարաջանով, հացեփների վերաբերեալ պարտադիր կանոնները խախտելու համար, ենթարկվում են՝ Մուսայէլեանը 15, Սարգսեանը և Շչերբինինը 25-ական, իսկ Փարաջանովը 100 ր. տուգանքի։

ԲԱԳՈՒԻ ԼՈՒՐԵՐ

◆ «Նոր Օրեր» լրագիրը հաղորդում է, որ «Каспій» օրաթերթը առաջիկայ սեպտեմբերի 1-ից վերսկսելու է իր հրատարակութիւնը։

◆ Իր ժամանակին հաղորդել էինք Բալախանում օգոստոսի 10-ին Մուստաֆայեվի նաւթահանքում կատարված սպանութեան մի դէպքի մասին, որտեղ նաւթահանքի կառավարիչ Արշակ Տէր-Մանուէլեանը ատրճանակի մի քանի հարուածներով սպանել էր, իր կեանքի դէմ անյաջող մահափորձից յետոյ փախչող, նոյն ֆիրմայի նախկին տելէֆօնշչիկ վաղարշապատցի Արշաւիր Բունեաթեանցին։ Այժմ, «Նոր Օրերի» ասելով, սպանված հայր Ե. Բունեաթեանը բոլորովին այլ լուսաբանութիւն է տալիս այդ սպանութեանը։ Նրա ասելով, «ճիշտ է որ իր որդին գնացել է նրա մօտ պաշտօն խնդրելու։ Սա (կառավարիչը) խոստացել է, առաջարկել է միասին ճաշել, երկար ժամանակ զրուցել են և յանկարծ սենեակի դուռը փակել է՝ երեխային բռնաբարելու նպատակով։ Սա սկսում է կատաղի դիմադրութիւն և մի կերպ աջողեցնում է դռան փեղկը բանալ և դուրս փախչել։ Այդ ժամանակ Արշակ Տէր-Մանուէլեանը, վախենալով իր ստոր արարքը ընդհանուրին յայտնի լինելուց, գնդակահար է անում անպաշտպան և անմեղ պատանուն»։ Այդ գազանութեան մասին հայրը խնդիրք է ներկայացրել դատախազին յիշատակելով վկաների անունները։

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ

◆ «Пет. Газ.» լրագիրը հաղորդում է, որ ռուսաց սինօդը ներկայումս բանակցութիւն է վարում Պօլսի պատրիարքի հետ առաջիկայ եկեղեցական ժողովի համար։ Այդ բանակցութիւնները կայանում են նրանում, որ սինօդը առաջարկում է պատրիարքին գալ Ռուսաստան և նախագահել այդ ժողովին։

◆ «Ազգային միութեան» լիդեր կոմս Ուբուսօվը դիմել է «ռուս ժողովրդի միութեան» գլխաւոր խորհրդին՝ առաջարկելով նրանց միանալ իրանց հետ և կազմել մի ընդհանուր «համառուսական ազգային միութիւն»։ Գլխաւոր խորհրդի նախագահ Դուբրօվինը յայտնել է, որ բոլոր միապետականների միաձուլման միտքը ներկայումս անիրագործելի է։ Հաղորդում են, որ Դուբրօվինը իր այս վերջին ճանապարհորդութեան ժամանակ հաւաքել է յօգուտ «ռուս ժողովրդի միութեան» 60 հազար ր.։

(«Ран. Ут.»)

◆ Օգոստոսի 18 ին Բէլօօստրօվ կայարանում սահմանապահ զինուորներից մէկը, հերթապահ լինելով իրանց շինութեան մօտ, «Нов. Вр.»-ի ասելով, վէճ է սկսել մօտիկից անցնող տեղացի բնակիչ Շալըինի հետ, պահանջելով, որպէսզի նա տայ իրան իր ձեռքի օղու կէսշիշանոցներից մէկը։ Շալըինը խիստ լեզուով մերժում է և մտնում հարևան խրճիթը։ Մերժումից զայրացած հերթապահ զինուորը հրացանից կրակում է և ծանր կերպով վիրաւորում։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌԱԳՐ. ԳՈՐԾԱԿԱԼ.

28 օգոստոսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Խոլերան շարունակում է զոհեր տանել Պետերբուրգի, Ուրալսկի, Կիևի, Օրելի, Տաշկենդի, Կրեմէնչուգի, Եկատէրինօսլաւի, Կոստրօմայի, Սամարայի, Եարօսլավի, Ուֆայի, Կերչի նահանգներում։ Միայն Պետերբուրգում օգ. 27-ին հիւանդացան 37, մեռան 12 հոգի։

ՎԻՆՆԻՑԱ։ Բացվեց գիւղատնտեսական ցուցահանդէս։

ՓԼՕՑԿ։ Օգ. 26-ին Սերպց քաղաքում այրվեցին 3 գնդի զօրանոցները։ Կարծում են, որ հրդեհը ձգել են չարամիտ անձեր։

ՌԻԳԱ։ Բացվեց Լիֆլանդեան բժիշկների 20 րդ հերթական համագումարը։ Ներկայ են 220 հոգի. կանոնադրութիւնն ընդունվեց միաձայն։

մի քանի Թիւրքերի, ինչպէս նաև ճանչցած և հրացան ունեցող արժենականների անունները։

«Լրութիւններին չափ ու սահման չը կայ. դեռ երէկ Գալուշեանը զաւաճանեց ծածկագրի բանալին և մի թաքստոց, որ կը գտնուէր բողոքականաց նորակերտ եկեղեցւոյ տակ, և շարժական սիւնի մը մէջ եղող կապոց մը։ Ցուցակների համաձայն ոստիկանաց խմբերը ինկան գիւղերը զէնք հաւաքելու. հրէշութիւններուն չափ սահման չկայ, ոսկորներ փշրելու չափ ծեծել, պայտեր զամել, ամօթոյք խարանել, կանայք և աղջիկները անպատուել՝ «քեաֆիրներ, երբեմն ֆէդայիներուն, այժմ էլ մեզ եղէք» ըսելով։ Արամի և միւս շէֆերի օրիորդների հետ թև թևի տուած լուսանկարներ գտնուեցան. տասնեակներով վիժածներ (ընկեցիկներ) թաղել տալը առած դարձած է։ Գիւղացի դաշնակցականները, տեսնելով որ իրենց հրացանները գնացին, միւսներին էլ մատնեցին, այսպէս մէկ կողմից հոտ մը իսկ չմնալու պայմանաւ սպլերով բերին յանձնեցին։ Ցանձնողներ առ այժմ ազատ են»։

Ուրիշ մը յուլիս 1 թուով կը գրէ. «Անցուցած գիտէք այս 5 ամիս է ինչեր եղան։ Ցնայց վանեցաւ պատիւը, եղանք կորագլուխ առաջի Աստուծոյ և մարդկութեան, նախատինք հայութեան, որով ժողովուրդ, վաճառականութիւն, ուսանողութիւն և կալուածատիրութիւն բոլորն ալ պարծենալով դասաճաններ են դարձեր, զերար մատնելով, անմեղ կիներ, հարսներ, աղջիկներ, մարդեր սոսկալի անպատւութեան և ծեծի ենթարկելով։ Գեղացի, քաղքցի, անմեղ ժողովուրդ գերի և սարսափ, թուք ու մուրի առարկայ դրացի ազգին, նախատինք քրիստոնէութեան, իրար մատնելով անհագին զէնքեր կառավարութեան յանձնեցին։ Շատ մը երիտասարդներ բանտին մէջ սոսկալի չարչարանքներու ենթարկուած են»։

Հարկ կա՞յ դեռ շարունակել սև շարքը այս անտաշ, բայց զգայուն գրութիւններուն։

Ինչպէս կը տեսնուի, սուլթանին զիջողութիւնը գէթ մեզ համար առնելին, մահու և կենաց կրիտիկական դառն և վճռական րոպէ մը կը հասնի, և յուսալի է, որ երկրէն հանելիք նոր լուրերը տիրող ցաւագին կացութեան յեղաշրջումը աւետեն։ Խեղճ հայաստանցիք. անոնք ամենէն աւելի իրաւունք ունին կտոր մը խաղաղութեան, ազատութեան, բանտերու մէջ զուր փտող և չարչարուող իրենց սիրելիները արձակուած, իրենց երերուն օջախը փլուզումի վտանգէն զերծ տեսնելու և տիրող նեղութիւնները մոռցած յուսալից ապագայի մը հանդէպ, հայրենիքը վերաշինելու զգացմամբ տոգորուն, անոր աշխատելու։

Այո, մեր թշուառ հայութիւնը պէտք ունի հանգստի, ոգեւոր դադարի մը, շունչ առնելու, ույժ առնելու և իր բնիկ երկրին մէջ վերահաստատուելու համար կրկին, ուրկէ ակամայ տարագրուած կը մնար։

Հօն ազատական կառավարութեան մը ներքև հայութիւնը հաստատելու համար հարկաւոր են սակայն խաղաղութիւն, հաց և կրթութիւն։ Առանց այս պահանջներու գոհացումին, ուրիշ ամեն փորձ ապարդիւն պիտի մնայ։ Երիտասարդ-Թիւրքերը, որոնք ամենէն աւելի օգտուեցան մեր այս 10—15 տարիներու անխորհուրդ և մարտիրոսական չարչարանքներէն ծնած կացութենէն, անոնք, որոնց միայն ծառայեցին մեր դժբաղդութիւնները, և անոնց նպատակներուն հասունացմանը, իրաւունք կուտայ մեզ յուսալ ու պահանջել, որ հայերուն այդ դերը նկատի առնուի իրենցմէ։

Կերևի ճիշդ այդ ոգւով է որ Պոլսոյ երիտասարդ-Թիւրքերը իրենց հայ հայրենակցաց հանդէպ առատաձեռն համակրական ցոյցեր մը կընեն, առաջանալով մինչև իսկ հայ մարտիրոսաց գերեզմանները և հայ եկեղեցոյ բեմը, եղբայրութեան քարոզներ հընչեցնելու, մինչ անդին նորակազմ Քեամիլ փաշայի մինիստրութիւնը նոյնպէս իրեն համար հայ անդամ մը կընտրէ։

Այս ամենքը աղէկ, բայց ոչ բաւական։ Թիւրք նոր կառավարութիւնը հայերուն հանդէպ արդարև շատ ծանր և փափուկ պարտականութեան մը ներքոյ կը գտնուի։ Անոր անաչառ, անկեղծ և կորուկ գործունէութենէն կախում պիտի ունենայ դէպի հայը իրեն ցուցուցած համակրական-ապացոյցը։

Մինիստր մը գէշ չէ. մանաւանդ Նորատունկեանի տիպէն մինիստր մը։ Բայց գիտնալու է թէ կայսրութեան հեռաւոր ծայրերը մինիստր մը ոչինչ կամ շատ քիչ բան կրնայ ընել։ Հոն, այդ տեղերն ալ հայ տարրէն արժանաւորները անխտիր պաշտօնի կոչելով է՝ ըլլայ վարչական, դատական և ըլլայ ոստիկանական բաժիններուն մէջ՝ որ տեղական քրիստոնեայ ազգաբնակութիւնը պաշտպանութեան վիճակի մէջ կարելի է դնել։ Փոքր պաշտօնեաներն են, որ ամենէն աւելի բարիք կամ չարիք կրնան պատճառել և անպատիժ մնալ, անոնք են, որ ազգաբնակութեան ամեն խաւերուն հետ առօրեայ շփման մէջ՝ կրնան, ի հարկին, ծառայել անոր պաշտպանութեան և բարօրութեան։

Եւ միանգամայն նկատի ունենալով միւսլիման տարրերուն զինուած կացութիւնը, հարկ կըլլայ ինքնապաշտպանութեան համար կամ հայերն ալ զինել և կամ միւսներն ամբողջովին զինաթափ ընել։

Իսկ ինչ որ մեզ համար արտակարգօրէն էական հարց մը և պահանջ մըն է, ատի հայ փախստական և գաղթական գիւղացիներուն յետ դարձը և իրենց տեղերու մէջ վերահաստատութիւնն է։ Եւ այդ վերահաստատութիւնը՝ լոկ պարզ և անուշ խօսքով լսելիք տեսակէն բան մը չէ դժբաղդաբար։

Հայ շինականաց հողերը՝ ինչ որ արհամարհելի քանակութիւնը մը չեն՝ այժմ ամենամեծ մասով օտարներու և քիւրդերու ձեռքը անցած, անոնցմէ բռնի իւրացուցուած են։ Առանց այդ հողերուն, հայ շինականը ազատութեան երազին մէջ օրօրուն պիտի մեռնի, անհետի։ Եթէ հայերուն ուրիշ կորուստները, այրած տները, կողոպտուածները եայլն հատուցանել դժուար, հնարաւոր պիտի ըլլան, գէթ անշարժ սեփականութիւնքը, հողը, որ շինականին սեփականութիւնն է, որ թէև օտարին ձեռքը՝ բայց իր տեղը կը մնայ, անմիջապէս իր հարազատ տիրոջը վերադարձուելու է, առատ ձեռներով և անկեղծ տրամադրութեամբ մը։

Կըմբռնենք, որ գործը նոր կառավարութեան համար դիւրին պիտի չըլլայ, այն, ինչ որ սահմանադրութիւն, ազատութիւն եայլն կը հռչակուի զրկեալներուն համար, բնականաբար զրկանքի և բռնութեան համար պիտի նկատուի զրկողներուն համար։

Կառավարութիւնը հայուն այդ արդար և անյետաձգելիօրէն անհրաժեշտ պահանջը գոհացնելու անկեղծ փափագը պիտի ունենայ, և ունենալու պարագային զայն գործադրելու՝ ի հարկին զինու զօրութեամբ գործադրելու՝ ճիգը և քաջութիւնը պիտի ցուցնէ՞։ Խնդիրը հոն է։

Ցուսանք, որ այսքան տարրական պահանջ մը անտես չառնուի։ Ատիկա պէտք մըն է, և կառավարութիւնը ընելու է զայն, որպէսզի ընդհանուր ներողութենէն և հռչակուած խաղաղութենէն օգտուիլ ուզող հայ շինականը կրնայ վերադառնալ, իր հողին տիրանալ, մշակել զայն, շահագործել, արդիւնաւորել, անով, իր հալալ քրտանց միջոցաւ, արդիւնաւորել և բոլոր երկիրը։

Ահա այս և նման խնդիրները, որոնց իրագործման կը սպասենք և որոնցմով պիտի զբաղինք հետզհետէ։

Մին

Կահիրէ 12 օգոստ.

Բալտիական առաջին համագումարը տեղի կունենայ Ռիգայում։

ՆՕՎՕՉԵՐԿԱՍԿ։ Փակվեց ուսուցչական դասընթացքները։ Դասախօսութիւններ կարդացին պրոֆէսորները և դասատուները։ Մշտական ունկնդիրների թիւը 70 մօտ էր, ժամանակաւորներինը՝ 200։

ՀԵԼՍԻՆԳՖՕՐՍ։ Օգ. 28-ին գեներալ-նահանգապետի, իշխանութիւնների և համալսարանների պատգամաւորութիւնների ներկայութեամբ բացվեց բարձրագոյն տեխնիքական դպրոցը։

ՌԻԳԱ։ Եկաւ փոխ-ծովապետ Հէսսէնը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Աշակերտութեան համար կանոններ են մշակվել Կիևում, Մինսկում, Աստրախանում և այլն։

ԿԱԼՈՒԳԱ։ Իգական կառավարական գիմնազիայում բոլոր ուսանողութեան համար հաստատվեց երեքօրեայ այգեգործութեան և ծաղկագործութեան ցուցահանդէս։

ՍԻՄՖԵՐՕՊՕԼ։ Օգոստոսի 27-ին վերջացաւ Թաթարական դպրոցների բարենորոգման խնդրով զբաղվող նահանգական յանձնաժողովի նիստը։ Վճռվեց տարրական դպրոցում հաստատել հինգամեայ դասընթացք կառավարական տարրական դպրոցների ծրագրով, դասատուութիւնը երկու տարի կատարել Թուրքերէն լեզուով, դպրոցում ընդունել աղջիկներ, մեկտեբէն Թողնել նախկին ձևով, չը մտցնելով ընդհանուր ցանցի մէջ։ Դասաւանդութիւնը ուսուցչական դպրոցում ընդարձակված է, հաստատված է 7 ամեայ դասընթացք։

ՅԱՐՕՍԼԱՒ։ Նահանգական զէմստվային ժողովը որոշեց նահանգական զէմստվօյին կից հաստատել նահանգական զէմստվային կազմակերպութիւն գիւղացիական կաթնատնտեսական ընկերութիւնների համար։ Այդպիսի կազմակերպութիւնը առաջինը կը հանդիսանայ Ռուսաստանում։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Վարշավայի համալսարանի պրոֆէսոր Շչերբակովը նշանակված է Օդեսսայի ուսումնարանական շրջանի հոգաբարձու։

Պետերբուրգը իր շրջակայքով և Պետերբուրգի շրջանի երկաթուղագծերը յայտարարված են խոլերայից անբարեյաջող։

Քաղաքապետի նախագահութեամբ հաստատվում է սանիտարական մասնաժողով։

Զինուորական գլխաւոր դատարանը անուշադիր թողեց Գոգոլիձէի վճռաբեկ բողոքագիրը, որ կովկասեան զինուորական դատարանից դատապարտված է մահվան պատժի։

Իւրիեվի համալսարանի պրոֆէսոր Լէվիցկին նշանակվում է Վիլնայի ուսումնարանական շրջանի հոգաբարձու։

Ֆինանսների մինիստրութեան առանձին յանձնարարութիւնների պաշտօնեայ Արցիմովիչը նշանակված է պետական բանկի կառավարչի օգնական։

ՕՐՎԻԼ (Անգլիա)։ 27-ին Բայդը բարձրացաւ աէրօպլանով, Թռչելով օդում 62 րոպէ և 15 վայրկեան։ Ներկայ էին զինուորական և ծովային վարչութիւնների ներկայացուցիչները։

ՊՈՐՏՍՄՈՒՏ։ Օգոստոսի 28-ին Ջուրը Թողին ամենամեծ պատերազմական «Դրեյնօուտ»-ի տիպի «Սուրբ Վինչենտ» զրահանաւը։

ԱՄՍՏԵՐԴԱՄ։ Օգոստոսի 23-ին Ապելտօօրնում Թագուհին վաղաժամ պառկեց և որդի ծնեց։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՑԱՅՏՆՈՒՄ Է

«Մշակի» բոլոր աշխատակիցներին և Թղթակիցներին.—Բոլոր յօդուածները պէտք է գրել մի երեսի վրայ։ Գրեթէ միշտ յօդուածների տպագրութիւն ուշանալու պատճառն այն է, որ գրաշարները հրաժարվում են շարել այն յօդուածները, որոնք երկու երեսի վրա են գրված և յաճախ պէտք է լինում կամ նորից արտագրել, որ բաւական ժամանակ է պահանջում, կամ ուշացնել տպագրութիւնը։

Ժամ. խմբագիր՝ Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ե. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 Թ.
(Գուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 Ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.։
Կ. Մ. ՉԻԿՕՎԱՆԻ—9½—10 Ժ. ունքի ներքին և ներքնային։
Ձ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 Ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 Ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 Ժ. մորթու, վեներակ., վիրաբուժութեան և միզասեռ.
Ա. Մ. ՓՈՒԼԻՆՕՎ—12—1 Ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ Ժ. ներքին և երեխայոց հ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԻՆԱ—1½—2 Ժ. մանկաբարձութեան։
Գ. Յ. ԳՈՒՐԳԵՆՕՎ—12—12½ Ժ. կանանց և մանկաբարձութեան։
ԻՐԻԿՈՒՆԵՐԸ
Ի. Ֆ. ՄԱՐՑԻՇԵՎՍԿԻ—5½—6½ Ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։
Ա. Յ. ՖԻՐԻՖԻՐԵԱՆ—6—7 Ժ. վիրաբուժ.,
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

Մ. Մ. ԿԱՐԱ-ՄՈՒՐԶԱՅԻ
→● ԿԱՐ ՈՒ ՁԵՒԻ ●←
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՈՒՄ
уголъ Бебутовской и Веляминовск., № 19.
Աշակերտուհիներ և կանանց շորերի ու ձեռագործների պատուէրներ ընդունում են օգոստոսի 25 ից.
Պարապմունքները սկսվում են սեպտեմբերի 1-ից։
Նոյն տեղը ընդունվում են և գիշերօթիկներ։
(30, 4, 7) 3—1

ՎԱՆՔԻ աւագ եկեղեցում կիրակի, օգոստոսի 31-ին, նորընծայ Խորէն Քահանայ Խուցեանը մատուցանելու է իր անդրանիկ պատարագը։ Սկիզբը 10 ժամին։
Պատարագին կերգէ քառաձայն խումբը։
Երեցփոխ՝ Հ. Մամուլեան
2—1

ՀՐԱՒԷՐ
Սրանով յայտնում եմ ս. Մինաս եկեղեցու յարգելի ծխականներին, որ կիրակի, օգոստոսի 31-ին, ժամը 11-ին, լինելու է հոգաբարձուների երկրորդ և վերջին ընտրութիւն՝ յիշեալ եկեղեցու ուսումնարանի համար։
Սարգիս աւագ քահ. Իգիթեանց
1—1

ՄՆԱՑԱԿԱՆ ՕՀԱՆԵԱՆՑԻ
ԱՄՍԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐՈՒՄ
Պարապմունքները վերսկսվում են սեպտեմբերի 1-ից։
Ընդունելութիւնը շարունակվում է։
ՋԻԱՆՈՒԻ դասերի համար հրաւիրված է յայտնի երաժիշտ Սեւին։
Հասցէ՝ Պօլիցէյսկայա փ., տուն Ակօպովի № 15, 9—12 առ., 5—10 երեկ.։
2—1

ԴՎՈՐՑՈՎԵԱՆ
ՆՈՄԵՐՆԵՐ
Քաղաքի կենտրոնում, Դվորցօվայա փողոցի վրայ։ Համարները նոր վերանորոգված են ամեն մի յարմարութիւններով և մաքրութեամբ։ Համարի վճարը օրով, նոյնպէս և ամսական՝ մեծ զեղջով։ Ծառաներն ուշադիր և ամեն մի պատուէր շուտափոյթ կատարող։ Ունի տելէֆօն և մաքուր խոհանոց։
Այդ շինութիւնը բանկի համար յատկացնելու լուրը անհիմն էր։
Կառավարչուհի՝ Զ. Սաղաթելեան
(21, 24, 28, 31) 4—3

ԴՊՐՈՑ
ԿԱՏ. ԼԻՍԻՑԵԱՆԻ
Երկու սեռի մանուկների համար։ Ընդունելութիւնը օգոստոսի 27-ից, ուսման սկիզբը սեպտեմբերի 6-ին։ Բեհբութեան փողոց, սեփ. տուն № 25.
10—5

Վառ. եւ Ստ.
Սմբատեանների
Միջնակարգ դպրոցների երկսեռ երեխաների նախապատրաստական ուսումնարանում (Բօտոօվից Դ/վ) ընդունելութիւնները սկսված են։ Բնակարանը համապատասխանում է առողջապահական բոլոր պահանջներին։ Դասերը սկսվում են 1-ին սեպտեմբերի։ Կայ երկու գիշերօթիկի տեղ։
Սօլօլակ, փողոց Պասկեվիչի, № 13.
(չ. ու. շ.) 10—6

ՄԻՆՉԵՒ ՕԳՈՍՏՈՍԻ 31-Ը
Լոյս կը տեսնի
Դասագիրք Պատմութեան
Նախապատմական մարդը
— և —
Հայկական առասպելներ
25 ՆԿԱՐՆԵՐՈՎ և
2 ԳՈՒՆԱՒՈՐ ՔԱՐՏԷԶՈՎ
Յատկապէս պատրաստված հայոց ծխական դպրոցների III բաժանմունքի համար, համաձայն 1906 Թ. մշակած դպրոցական ծրագրի։
Հասցէ՝ գրավաճառանոց «Գուտտենբերգ». կարելի է դիմել և Գ. Վարդանեանին՝ ս. Նշանի դպրոցում, Թիֆլիս։
3—3

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
Ներքին և երեխայոց հիւանդութիւններ, առանձնապէս ստամոքսի և աղիքների հիւանդութիւններ։
Հիւանդների ընդունելութիւնը։ } 12—1 առաւօտ. 5—6 երեկոյեան
Միքայէլեան փող., № 36, տ. Ճավճանիձէի։
100—10

Հայոց եկեղեցական-ծխական և պետական դպրոցներում 14 տ. փորձառութեամբ ներսխեանում ուսած
✳ Ցենզաւոր եւ ձայնագրագէտ ✳
ՈՒՍՈՒՑԻՉ-ՔԱՀԱՆԱՅ
իր պաշտօնատեղի կլիման չը տանելով ցանկանում է տեղափոխվել։ Պայմանների մասին դիմել՝ Тифлисъ, К. Апрѣльянцъ въ армянскую консисторію.
(շ. ե) 2—2

Դպրոց եւ Մանկական պարտէզ
Ե. Ս. Ցարուբիւնեանի
Երկու սեռի մանուկներ պատրաստվում են բոլոր միջնակարգ դպրոցների համար։
Ընդունելութիւնը օգոստոսի 25-ից։
Ուսումը սեպտեմբերի 1-ից։
(21,23,24,26,28,30,31, 2,5,7) 10—6

ԷՊԻԼԻԱՏՕՐ

ՆԻԼ
աւերում է վայրկենապէս, վերջնականապէս եւ առանց ցաւի ՄԱԶԵՐԸ եւ ԱՂՈՒԱՄԱԶԸ, որոնք այլանդակում են դէմքը եւ մարմինը։ Առաջ չէ բերում էպիդերմիսի բորբոքումն։ Մորթը դառնում է կակուղ և Թաւշային. գործ են ածում արտիստները և բարձր արիստոկրատիան։ Միակն է, հաւանութիւն գտած հռչակաւոր բժիշկներից։
ՈՍԿԷ ՄԵԴԱԼ
Սրուակի գինը 4 ր.։ Առաքումը ձրի։
Verdeille Pharmacien de 1-re classe, 87, Rue de Levis, Paris. Պահեստը՝ Кавказское О-во Торговли Аптекарскими Товарами въ Тифлисѣ. (15, 30) 13—4

Ուսումնարան - Պանսիոն
Յովսէփ Մելիք-Ջհանեանցի
ԹԻՖԼԻՍՈՒՄ
Տեղափոխվել է
Сололакская ул. д. № 10 (рядомъ съ аптекой Оттена)
Ընդունվում են աշակերտներ գիշերօթիկ և երթեւեկ և պատրաստվում են բոլոր միջնակարգ դպրոցների համար։ Աւանդվում են ռուս, հայ, գերման, լատին և ֆրանսիական լեզուներ։ Այդտեղ կազմակերպված են և խմբական պարապմունքներ միջնակարգ դպրոցների բարձր դասարաններ մտնել ցանկացողների համար։ Առարկաներ աւանդելու համար հրաւիրված են մասնագէտ ուսուցիչներ։ Ի միջի այլոց աւանդվում է և իտալերէն։
(օ. մ.) 5—5

Պահանջեցէք ամեն տեղ „ՕԴՕԲՐԻՆ"
Միայն ՄԻԽԱՅԻԼ ԼԵԲԵԴԵՎԻ
„Этикетъ утвержденъ прав." մակագրութիւնով

Գլխաւոր պահեստատեղին դեղագործական ապրանքների վաճառման կովկասեան ընկերութեան մէջ—Թիֆլիս, Բագու, Բաթում։
(10, 20 30) 50—19

УГОЛЬ
КУЗНЕЧНЫЙ, ПАРОВИЧНЫЙ, ПЛАМЕН., АНТРАЦИТЪ, КОКСЪ.
ЦѢНЫ ОПТОВЫЯ.
А. БРАУХЛИ, Харьковъ.
52—4

Ֆ.Ֆ.Դևսլեր տեխնիքական
գրասենեակը Պետերբուրգում
Невскій 164, Телегр. адр. „Техдеслеръ".
Ամենաէժան աղբիւր ձեռք բերելու նոր և գործածութեան մէջ սակաւ եղող մեքենաներ, պղնձներ, լօկօմօբիլներ, կէր. և նաւթի ու գազի շարժիչներ, մոտորային մակոյկներ, շոգենաւեր և մետաղներ։
Պահանջեցէք ծախսացուցներ.
(18, 22, 25, յուլ. 1, 11, 21, 30, օգ. 10, 20, 30) 10—10

Լ. ՁԻՄԱՆՍԿՈՒ ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԴՊՐՈՑ ՎԱՐՇԱՎԱՅՈՒՄ
Варшава, Ново-Міодовая I (уголъ Красоьскаго Предмѣстья)
Նոր ուսանողների ընդունելութիւնն արդէն սկսվել է
Դասատուութիւնը ռուսաց լեզուով։
Պրօգրամն ուղարկվում է ըստ պահանջի
(№ 24629 վճ.)
(օգ. 20, 25, 30) 6—6

Լոյս տեսաւ
ՀԱՅԿ ՏԷՐ-ԱՍՏՈՒԱԾԱՏՐԵԱՆՑԻ
ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
Սկզբից մինչև 1908 Թ. օգոստոսը
Հայոց ծխական դպրոցների Գ. Դ. և Ե. տարիներ, երկրորդ բարեփոխած տպագրութիւն, 240 էջ, 66 պատկեր, որոնց մի մասը իսկականներ (դրամներից և այլն), Ուրարտուի և Նախնի Հայաստանի քարտէզ, Նախապատմական կեանք, Ուրարտու, հայերի հայրենիքը, հին հայոց կրօնը, պատմութիւն ըստ հայ պատմագիրների, օտար պատմագիրների, արձանագրութիւնների ըստ գիտնական աշխարհի։ Թւականների մեծ մասը ստուգված։
ԳԻՆԸ 50 ԿՈՊԷԿ
Դիմել գրավաճառներին և կամ հեղինակին՝ Тифлисъ, Панасевича ул. № 1. Айку Теръ-Аствацатрянцу, կամ Tiflis (Caucase-Russie) Rue Panasewitscha, № 1. Aik Ter-Astwazatourian.

Ժողովրդական Լուսաւորութեան Մինիստրութեան իրաւասութեան տակ Պետերբուրգի Կայսերական Գեղարուեստական Ճեմարանի վկայագրով
ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ
ԿՈՒՐՍԵՐ
ԳԱՐԵԳԻՆ ԼԵՒՈՆԵԱՆԻ
ԹԻՖԼԻՍՈՒՄ
Երկու սեռի անձերի համար
ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ
Պարապմունքները լինում են 5-7 ժ.
(Բացումը սեպտեմբերի 15-ից)
Աւանդելի առարկաներն են՝ նկարչութիւն (սև, ջրաներկ և իւղանկար), գծագրութիւն, գեղագրութիւն (հայ և օտար լեզուներով), ձեռարուեստ, փորագրութիւն, քանդակագործութիւն, շքեղ ձեռագործ, հեռանկար (պերսպեկտիվա). գոյների և ստուերների տեսութիւն։
Բոլոր ուսուցիչները մասնագէտներ են։
Աւարտողները ստանում են ատտեստատներ։
Կուրսերին կից կայ գեղարուեստական գրադարան։
Տարեկան վճարն է 40 ր. կամ ամսական 5 ր., դպրոցականների համար 25 ր. և 3 ր.։ Յաճախել ցանկացողները թող բարեհաճեն գրաւոր յայտնել այդ մասին կուրսերի հիմնադրին, որից և կարելի է ստանալ աւելի մանրամասն տեղեկութիւններ. Հասցէն՝ почт. ящ. 133.
(շ.) (ապ.) 6—4

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ
Ստ. Լիսիցեանի, Յովհ. Թումանեանի եւ Լ. Շանթի
ԿԱԶՄԱԾ
ԼՈՒՍԱԲԵՐ
Հայերէնի պատկերազարդ դասագիրքը
Ա. ՏԱՐԻ — II տիպ, բարեփոխված — Գինը 30 կ.
Բ. ՏԱՐԻ — Գինը 45 կ.
Գլխաւոր պահեստները՝ Թիֆլ. „ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ" գրավաճառանոցում, Тифлисъ, книжный магаз. „Гуттенбергъ"; Բագւում „Сотрудникъ" գրավ.
Գումարով առնողներին 20% զեղչ։
ՆՄՈՒՇ ՕՐԻՆԱԿՆԵՐԸ ուսուցիչներն և դպրոցները կարող են ստանալ «Գուտտենբերգի» գրասենեակից ՁՐԻ (գաւառ ուղարկվում են 14 կ. ճանապարհածախսով)։
(չ.շ.) 10—10

(25, 30, օգ. և սեպ. 15, 30) 6—3

Սրանով յայտնում եմ ի գիտութիւն յարգելի
ՀԱՅԱՎԱՃԱՌՆԵՐԻ,
որ ՍՏԱՒՐՕՊՕԼ ՔԱՂԱՔՈՒՄ ԲԱՑԵԼ ԵՄ ՀԱՅԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ
Գլխաւոր նպատակս է մատակարարել Անդրկովկասեան քաղաքներին ամեն տեսակ հացահատիկ եւ ալիւր թէ տեղից և թէ շրջակայ կայարաններից։
Ալիւրը պատրաստում եմ սեփական ընտիր ցորենից՝ հետեւեալ տեսակների—«կրուպչատկա», «սէյանկա» և «բազմօլ»։
Հետաքրքրվողներին իսկոյն ուղարկում եմ նմուշները՝ միաժամանակ նշանակելով և գները։
Գների զգալի փոփոխութեան ժամանակ կլիէնտներին յայտնվում է հեռագրով։ Խնդրում եմ ի նկատի ունենալ, որ ամեն մի ապրանք ես գնում եմ առաջին ձեռքից, այնպէս որ այդ հանգամանքը հնարաւորութիւն է տալիս ինձ վաճառել ուրիշներին ամենաօրժալ գներով։
Յուսով եմ, որ յարգելի վաճառականները անուշադիր չեն Թողնի իմ ֆիրման։ Պատուէրները կը կատարվեն կարելոյն չափ շտապով, ամենայն ճշտութեամբ և բարեխղճօրէն։
Թղթակցութիւնները հայերէն և ռուսերէն լեզուներով։
Յարգանքով՝ Մ. Յ. ՖԱԼԱԿԵԱՆՑ
Հասցէ՝ Նամակի համար. Ставрополь.-губ., М. А. Фалакянцу, почт. ящ. № 48.
Հեռագրի համար. Ставрополь.-губ., Фалакянцу.
(շ.) 50—2